Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

564

ՀԱՄԱՌՕՏ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ

ԿԻԼԻԿԻՈՅ

Ա-34

ՅՕՐԻՆԵԱՑ

ԳԵՐ· ԳԵՐՅ· ԱՆԴՐԷԱՍ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ
ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ
ՄԵԾԱՒՈՐ ՎԱՆԱՑ Փ· Կ· ԶՄՄԱՌԻ

ՎԵՆԵՏԻԿ — Ս· ՂԱԶԱՐ
1906

34

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ

ԿԻԼԻԿԻՈՅ

Anhang

Zusammenstellung von Ein- und Durchfuhrverboten und -beschränkungen für Tierische Produkte: Milch und Milcherzeugnisse.

1940 Nr 89. 1941 Nr 35. 62. 88. 1942 Nr 62 u. 1944 Nr 53.

Հանձնած
Գրադ. Ալպոյաճեանի
Գանձարէ — Մաքարիա

ՀԱՄԱՌՕՏ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ

ԿԻԼԻԿԻՈՅ

ՅՕՐԻՆԵԱՅ

ԳԵՐ· ԳԵՐՅ· ԱՆԴՐԷԱՍ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ

ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ

Կկ/132

ՄԵԾԱՒՈՐ ՎԱՆԱՅ Փ· Կ· ՋՄՄԱՌԻ

ՎԵՆԵՏԻԿ — Ս· ՂԱԶԱՐ

1906

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐ ԳԱՐԱՆ
ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի ԿԻԼԻԿԻԱ

Որպէս իսկ հաւանութեան է, սկիզբն նուիրապետութեան Ազգիս Հայոց եղև յամին 304. և առաջին եկաց հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն և Առաքեալ Հայոց մեծաց։ Արք հոյակապք և սուրբք յաջորդեցին զնա ի Վաղարշապատ, կամ յաւէտ յԱշտիշատ Տարոնոյ զամս 150 (կամ 180) և փոխադրեցաւ Աթոռն ի Դուին, ուր մնաց զամս 470, ցամն 924։ Յետ այնորիկ ոչ ուրեք զժամանակ մի հաստատուն կալաւ կայան, տարաբերեալ յայլ և այլ տեղիս յարևելեան աշխարհս Հայոց զամս 130 (924–1054)։ Այսու օրինակաւ անցին ի հաստատութենէ անտի նուիրապետութեան ամք 750 (304–1054)։ Եւ չգտեալ այնուհետև հանգիստ և դադար ի կողմանս, որ յարևելից Եփրատայ, անցանէր յայսկոյս ի խնդիր անքոյթ վայրի, առ ի հաստատել զաթոռ Լուսաւորչին, որ կայրն ի ծուփս յալեկոծութեան ժամանակին։

Այլ մինչչև գտեալ զոր որոնէրն՝ հարկ եղև նմա և աստ թափառիլ այսր և անդր զամս իբր 95. (1054–1147) Եւ ըստ այսմ փոխադրեցաւ հուպ ընդ հուպ ի Սեբաստիա, ի Թաւ բլուր, ի Ծաճնադաւ, ի Հոնի, ի Մատրաւուն, յանապատն Շուղր, ի Կարմիր վանս, և ի Ծովք դղեակ։ Պետրոս Ա. Գետադարձն վախ-

ճանեցաւ և թաղեցաւ ի վանս Սուրբ Նշանին, որ ի Սեբաստիա։ Խաչիկ Բ. ի Թաւբլուր։ Գրիգոր, Բ. վկայասէրն ի Կարմիր վանս մերձ ի Քեսուն։ Եւ Բարսեղ Ա. յիւրակերտ վանսն յանապատին Շուղր։

Գրիգոր Գ. Պահլաւունի յետ նստելոյ զամս ԺԲ, ի սեաւ լերին. և զամս ԻԲ. ի հայրենի դղեկին իւրում ի Ծովք, որ անուանեցաւ բերդ կաթողիկոսի, գնեաց ապա զՀռոմկլայ ի Փրանկաց, և անդր հաստատեաց զԱթոռ իւր, որով և հանգեաւ այն զհարուստ մի ժամանակ, իմա ամս 147. (1147–1294)։ Եւ նստան անդ հայրապետք տասն. յորս երևելիք են Պահլաւն Գրիգորիս, Գ. Ներսէս Դ. Շնորհալին. Գրիգոր Դ, Տղայ. Գրիգոր Զ, Ապիրատն. Յովհաննէս Ը, Մեծաբարոյն. Կոստանդին Ա. Բարձրբերդցին. այլովքն հանդերձ. որք պայծառացուցին զԵկեղեցին Աստուծոյ ի Հայս պէսպէս ուղղութեամբք և գեղեցիկ բարեզարդութեամբ։ Յերկրորդի ամի հայրապետութեան Ստեփանոսի Գ. զամ մի պաշարեալ զՀռոմկլայ առին զայն Եգիպտացիք և աւերեցին. գերի անկաւ և կաթողիկոսն որ յետ միոյ ամի վտարանդութեան վախճանեցաւ յԵգիպտոս յամին 1294։

Զկնի մահու նորին ի նմին (1294) ամի ընտրեցաւ Գրիգոր Է., Անաւարզեցի՝ անուանեալն տուրք երիցանց, որ ի գերութեան անդ Ստեփանոսի Կաթողիկոսի՝ տեղապահութեամբ վարէր զաթոռն։ Եւ զի չէր այլ ևս մարթ կալ յակաստանի ի Հռոմկլայ, որ աւերեալ իսկ էր, հաստատեցին զԱթոռ հայրապետութեան ի Սիս յարքայանիստ քաղաքն Կիլիկիոյ, ուրանոր եկաց մնաց զամս 446, (1294–1740)։ Եւ յայսմ միջոցի նստան անդ կաթողիկոսունք թուով աւելի քան զքառասուն, այլ պակասի ստոյգ չափ ժամանակի մէն միոյ ի նոցանէ, և ոչ ինձ արդ կամք են դեգերիլ ի նոյն, զի իմ նպատակ յիշել ևեթ է

զերևելեաց ոմանց ի նոսա զանուանս և զարարս ինչ նոցա և փութալ անցանել ի պատմութիւն Հայրապետացն. որք կալան զԱթոռ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին ի 1740 ամէ և այսր։ Եւ արդ։

Զ Գրիգորէ Լ, որ առաջին եկաց պատրիարք ի Սիս, գրէ Կղեմէս Գալանոս այսպէս. «Գրիգոր ի Սոյ, սա առաւել քան զայլ ամենայն ուղղափառ հայրապետս հայոց սիրէր զԱռաքելական Սուրբ Աթոռն Հռովմայ. զի այր էր լի ծայրագոյն սրբութեամբ և գիտութեամբ, և յոյժ ցանկայր միաբանութեան և փրկութեան ազգին իւրոյ։ Գրեաց առ Հեթում արքայն իւր՝ զթուղթն փրկարար և լուսաբեր, որով յայտ առնէր զամենայն մոլորութիւնս, զորս պարտ էր Հայոց մերժել ի բաց, և բազում պատճառօք և վկայութեամբ Սուրբ Հարց և Աստուածաշունչ գրոց հաստատէր զհաւատոյ ճշմարտութիւն, նաև աղաչանօք աղերսէր զնա գումարել զժողով ամենայն Եպիսկոպոսաց և Վարդապետաց Հայոց առ ի պէտս քննութեան իրացն և համաձայնութեան»։ Նոյնն հաստատի և ի հակառակէն ի բանից յիշատակարանի Աստուածաշունչ գրոց, որ գաղափարեալ է ի գիրս Հաւաքման քարոզից, անընդմիջապէս զկնի թղթոյ Ստեփանոսի Սիւնեցւոյ առ Գրիգոր Կաթողիկոս (Անաւարզեցի)։ Եւ Յիշատակարանս իսկ գործ է նորին Ստեփանոսի յորում գրէ նա, թէ Գրիգոր Կաթողիկոսն «քարոզէր շրջագայական թղթովք, ի բաց կալ ի հայրենի հաւատոց և ընդունել զՔաղկեդոնի չարափառութիւն (1) և յորս ձեռնահասն լինէր՝ սաստկութեամբ հնազանդեցուցանէր, որպէս և նուաճեաց զթագաւորութիւն Հայոց, և զբոլոր աշխարհն Կիլիկեցւոց, և զՀռոմս, և զմեծ մասն Արևելից աշխարհիս»։ Եւ յաւելու, եթէ ինքն բուռն դիմակալութեամբ

պահեաց զՍիւնեաց աշխարհն և զսահմանակից տե-
ղիս մերձաւորս նմին։ Որով յայտ առնէ, եթէ առ
հայրապետութեամբ նորին Գրիգորի ծաւալեալ յոյժ
էին կաթողիկէ հաւատք յազգին Հայոց։ Գլուխ գոր-
ծոց Հայրապետիս և թուղթն այն վարդապետական
առ Հեթում, գրուած սքանչելի, զոր առաջնորդ կալան
ինքեանց հարք ժողովոյն Սսոյ և Ատանոյ, որք և
դրուատեցին զայն յարգանօք։ «Հաւանութեամբ և
պատուով ընկալաք զհրաման Սրբոյ Հօրս (Գրիգորի
Անաւարզեցւոյ) և զսոյն նամակս և զօրինադրութիւն
հաստատեցաք յամենայն Եկեղեցիս Հայոց»։

Գրիգորի Է., յաջորդեաց Կոստանդին Գ. Կեսարա-
ցի, որ նուիրակութեամբ առաքեալ էր ի նախորդէն
իւրմէ ի կողմանս Արևելից։ Սա արար զյիշատա-
կեալ ժողովն Սսոյ (1307) և Ատանոյ (1316) և
հաստատեաց նոքօք զինն գլուխս բանից վարդապե-
տականս և բարեկարգականս, զաւանդեալսն ի Գրի-
գորէ Է., ի թուղթն առ Հեթում. և ջանացաւ հետևիլ
ըստ ամենայնի նախորդին իւրոյ պահելով զհօտ իւր
յուղիղ հաւատս և ի վարս անարատութեան։

Նստան հետզհետէ ի նոյն Աթոռ բազումք, յորս
առանձին յիշատակութեան արժանի են,

Յակոբ Բ, Տարսոնացի, զորմէ գրի ի յիշատա-
կարանի ուրեք, թէ «էր յոյժ հնազանդ Հռովմայ
Սուրբ Եկեղեցւոյն, հրամանակատար, և այլն։

Մխիթար Փռնեցի, որ արար զժողովն Սսոյ (1342),
յորում յայտնապէս ընդունին զգլխաւորութիւն Եկե-
ղեցւոյն Հռովմայ, և զփրկաւէտ վարդապետութիւն
նորա յԵրրորդութիւն, ի Մարդեղութիւն և այլն։
Կոստանդին Զ. Վահկեցի, որ յամին 1439, պատ-
գամաւորս առաքեաց ի ժողովն Փլորենտեան և ի
հրահանգին զոր տուեալ էր նոցա գրէր ի կարգս
բանից «որպէս և զիարդ լուսաւորեացէ Սուրբ Հոգին

Գիրքս
Արտակ Ալպոյաճեանի
Գահիրէ — Մսրայիմ

զՍուրբ Սինհոդոսն, այնմ պատրաստ եմք հնազանդիլ»։

Գրիգոր Թ. Մուսաբեկեանց, որ առ Եւգինիոս, (յամին 1445–պղդ) գրեաց «Զոր ինչ անդ արարին և խօսեցան (հրեշտակք մեր) զամենայն և զբնաւ, որ ի Փոյ Բարձրութենէդ սահմանեցան՝ մտադիր ընդունիմ»։

Ազարիա կամ Զաքարիա Բ, Յովհաննէս ԺԲ. մեծաբարոյն, Գրիգոր Ժ. Ատանացի, Պետրոս Բ. Պիսակ Բերիացի, որ համարի ազգական առաջնոյն, վասն երկոցունցն անուանելոյ Պիսակ, ցուցին գործս միաբանութեան ոչ սակաւ։

Գրիգորի Ատանացւոյ հնազանդութիւն առ Սուրբ գահն Հռովմայ յայտ ի գործոց նորա է, մանաւանդ յերթալոյն ի Հռովմ յամին 1694, հանդերձ երկու Եպիսկոպոսօք։ Այս իսկ անշուշտ եղև պատճառք, զի ի նորա կենդանութեան գրաւեցին զաթոռն այլք ոմանք, որպէս Ատուածատուր ոմն Նարին ասացեալ. և Մատթէոս ոմն Սարի, որք և զմիմեանս վտարեցին անտի, ոչ ընդ երկար կացեալ յԱթոռն, զոր յափշտակեցինն, և չէ ինչ ծածուկ ընթացք զոր կալաւ ապա Մատթէոս անուանեալն Սարի։

Կալաւ ապա զաթոռն Պետրոս Բ. Պիսակ, անշուշտ հաւանութեամբ Գրիգորի, որոյ ազգական իսկ էր, զի երկոքին յորջորջէին Պիսակ, թէև մին Ատանացի ասի և միւսն Բերիացի, և երկոքին իսկ միաբան էին ընդ Եկեղեցւոյն Հռովմայ։

Պետրոս ձեռնադրեաց զՄելքոն Թասպաս Արքեպիսկոպոս Մարտինոյ և ապա զԱբրահամ Արծիւեան Արքեպիսկոպոս Բերիոյ զորոց քաջ գիտէր զկաթողիկեայ հաւատս։ Եւ նա ինքն Մելքոն Արքեպիսկոպոս ի թուղթն իւր առ Սուրբ ժողովն վկայէ զուղղափառութենէ նորա, և այս յառաջ քան զձեռնա-

դրիլ իւր Եպիսկոպոս։ Նաև Ստեփանոս Ա.ֆիանթիլ Ա.րքեպիսկոպոս Տփղիսոյ գրէ, եթէ Ա.բրահամ «չո-գաւ առ Գեր. Պետրոս Պատրիարք Սոյ, գիտացեալ զի ի ծածուկ ուղղափառ իցէ»։ Ի ձեռնադրութեան Ա.բրահամու, որ եղև ի Բերիա, զանց արար Պետրոս զնզովիւք ժողովոյն Քաղկեդոնի, զառումարին Լէոնի մեծի և զերկաբնակացն, որպէս յայտնի նշանակի ի պատմութեան նորին Ա.բրահամու, որ և ոչ խըղ-ճեաց մատուցանել պատարագ հանդիսի յետ մահու նորա, բազում ամօք զկնի։

Այս ամենայն գործք և արարք չթողուին ճնալ ի ծածուկ կաթողիկոսութեան նորին, յաչս այնոցիկ, որք ոչ հանդուրժէին այնմ։ Սմին իրի և յարեան ընդդէմ Հայրապետին և վտարեցին զնա ի Պարսս, ուր ճնաց զամիսս ինն, և յաքսորանս անդ կնքեաց զկեանս իւր խոստովանողական մահուամբ։

Իվերջ կոյս ԺԷ. դարուն սկիզբն եղև դառն հա-լածանաց կաթողիկեայցն Հայոց. և հալածիչք կա-ցին, որք զպատիարքի Կուսանդնուպօլսի ունէին յորջորջումն Եփրեմ, Աւետիք և այլ նմանիք նոցա։ Եւ այս հալածումն՝ մերթ առաւել և մերթ նուազ սա-ստկութեամբ յառաջէր զամս իբր հարիւր քառասուն։

Յետ աքսորանաց և մահու Պետրոսի Բ. Կաթո-ղիկոսի. փորձեցին կաթողիկեայ Հայք յամին 1714, լինել հասարակութիւն ուրոյն, անկախ ի պատ-րիարքէ բաժանելոցն, այլ ոչ յաջողեաց նոցա, և անկան ի բանդ, ի շղթայս, ի թիարան, ուր և փո-խեցաւ առ Տէր՝ Մելքոն Թասպաս խոստովանող Ա.ր-քեպիսկոպոսն Մարտինոյ։ Եւ որք զերծանն՝ որով և իցէ օրինակաւ, գնացին փախստեայ յԱ.րևմուտս ի Հռովմ, ուր և կնքեցին ապա զկեանս իւրեանց։ Սակաւք յոյժ ճնացեալ էին յԱ.րևելս Կաթողիկեայ Եպիսկոպոսունք յորս պայծառ հանդիսանայր Ա.ր-բրահամ, Ա.րքեպիսկոպոսն Բերիոյ։

ԱԲՐԱՀԱՄ Բ. ՊԵՏՐՈՍ Ա

ԱՐԾԻՒԵԱՆ ԱՆԹԱՊՑԻ

14 Հայր Տ. 1740 – 1749

Ծնաւ Աբրահամ յԱնթապ քաղաքի յամին 1679. եթէ յօրէ ծննդենէ նորա մինչև ցամբառնալն ի Հայրապետութիւն Տանն Կիլիկիոյ ի հաշիւ ոք արկանել կամիցի, ընդ ամս վաթսուն (1679–1739), Հայրապետս տասն և աւելի յերկաքանչիւր Աթոռն Սոյ և Էջմիածնի գտանիցէ և առաւել քան Եպիսկոպոսս քսան, որք զմիաբանութիւն իւրեանց ընդ Եկեղեցւոյն Հռովմայ գրութեամբք, և այցելութեամբ ի սեամն՝ յայտ արարին, թող զայլս բազմագոյնս, զորոց չէ գրեալ ինչ որոշակի: Այլ սոքա ամենեքին, որ ծերութեամբ, որ յաքսորս, որ ի տառապանս կընքեցին զկեանս իւրեանց վասն ի Քրիստոս Կաթողիկեայ անարատ Հաւատոց: Էին ևս այլ սակաւ, որք նովին օրինակաւ կային յօտարութեան յաւէտ ապաստանեալ ի Հռովմ: Այնպէս զի տակաւ նուազէր թիւ նոցա, և երևէր իմն եթէ դատարել ունէր այնուհետև յազգին Հայոց յաջորդութիւն Կաթողիկէ Եպիսկոպոսացն, միմիայն ճիւռ յողկուզաց ճնայր յԱրևելս Աբրահամ Արքեպիսկոպոս, խոնջեալ վաստակեալ բաց ի հովուական գործոց և խնամոց, ևս և ի հալածանաց, ի հետապնդութեանց, ի դառն բանտից, ի շղթայից, յաքսորանաց և յազգի ազգի չարակրութեանց, և յառաջէր տակաւ յամս կենաց իւրոց: Օժանդակել օժանդակէր նմա ուրեք երբէք Յովհաննէս Հայրապետ Տանն Կիլիկիոյ, որ նատաւ

ցամն 1721, այլ ոչ միշտ, ըստ բուսոյ բարուցն երկչոտութեան։ Սմին իրի Եկեղեցականք և աշխարհիկք այլ և այլ քաղաքաց, յորս գտանէին կաթողիկեայ Հայք, թուղթս և բանքերս առ միմեանս առաքել սկսան։ Կ. Պոլիս, Սեբաստիա, Եւդոկիա, Եգիպտոս, Եդեսիա, Տիգրանակերտ, Բերիա, այլովք հանդերձ ձեռն առ ձեռն կարկառէին ի լրումն ժամանել խորհրդոյն. յորս Բերիա յառաջադէմ հանդիսանայր ի ժամուն. նա զի և զհովուէ այնր քաղաքի բանքն էին, և այն ի խորհրդեան նոցա կայր, զի չև մահու ի ձեռաց իւրեանց զայնպիսի Սրբեպիսկոպոս յափշտակեալ, պարտ և հարկ իցէ փութալ ի նորոգութիւն կաթողիկէ հայրապետութեան։

Վաղ իսկ զայս խորհուրդ ատուածահաճոյ երկնեալ էին կաթողիկեայք, և փորձ իսկ փորձեալ յայն սակս, և ի նոյն կացին առանց ինչ արդեանց։ Ծանօթ էր իրացս և Այրն Մեծարոյ Գերապայծառ Եուսէֆ Սմաան էլ Սմաանի նուիրակ Առաքելական Աթոռոյն յԱսորիս. և թէ որպէս, գիտելի է զի յամին 1735, իշխանաւորք ոմանք ետուն Աբրահամու և կրօնաւորաց նորա զվանքն Մար Ճրճօս Աւգար ի Տըպայի ասացեալ տեղոջ, զոր հաստատեաց Գերապայծառ Էլ Սմաանի, գրելով ի ատրև պատճէնի մուրհակին ի 15 սեպտեմբեր 1756, ամաւ զկնի գրութեան այնր, եղեալ այլ և այլ պայմանս, յորոց մի է և այս «Հինգերորդ, բնակիչք յիշեալ վանաց հետևեսցին միշտ բարիոք գնացից Գերապատիւ Վարդապետին Սրբահամու Սրբեպիսկոպոսին Բերիոյ. և լինիցին ընդ վարչութեամբ և հպատակութեամբ նորին ցոր վայր կենդանի իցէ, թէև ի բարձրագոյն աստիճանս ամբարձցի»։ Բանքս այսոքիկ յառնէ խոհականէ, որպիսի ոք Գերապայծառ Էլ Սմաանին էր Նուիրակ Առաքելական Աթոռոյն յԱսորիս, ի կիր

արկեալք, ո՛չ վարկպարագի այլ ի պաշտօնական գրութեան, չկարէին առանց բարձրագունից հաւանութեան կամ գիտութեան ունել տեղի։ Եւ այսպէս յայտ է, թէ ամենայնն լինէր յառաջագոյն ծանօթութեամբ Սրբոյ Աթոռոյն։ Սակայն և այնպէս երկարէր խորհուրդն՝ գործ լինել տակաւին զամս ինչ (1736–1739)։

Յամին 1739, Կաթողիկեայք Բերիոյ զմի յերկուց Եկեղեցեաց քաղաքին զփոքրագոյնն նուիրեալ ի պատիւ Սուրբ Կոյս Աստուածածնին՝ յաջողէին բերել ի ձեռս, էին յայնժամ ի քաղաքի անդ եօթն քահանայք երեւելիք. Յակոբ վարդապետ որդի Տիրացու Յովսէփայ, Սահակ վարդապետ որդի տեառն Բարսղի, Տէր Մարտիրոս մեծն. Տէր Գէորգ Գմբէթեան, Տէր Աբրահամ Շիրին, Տէր Մանուէլ, Տէր Գրիգոր որդի Տեառն Ներսիսի Եղբօր Տեառն Սահակայ։ Յետ առման Եկեղեցւոյն մեծամեծք քաղաքին և եկք, նոյնպէս և յիշեալ պատուական քահանայք հրաւէր առաքեցին առ Աբրահամ իջանել ի Բերիա և կալ ի մէջ հօտին իւրոյ։

Իսկ ինքն Աբքեպիսկոպոսն կամեցաւ յառաջ քան զմեկնիլ իւր Լիբանանէ, ի կարգի դնել զվարչութիւն վանաց Ամենափրկչին, որում անձամբ առաջնորդէր ցայնվայր, ըստ կանոնաց մարոնի կրօնաւորաց Սրբոյն Անտոնի Աբբայի, զոր հաստատեալ էր Քահանայապետն Կղեմէս ԺԲ. առաջի առնելով զայն և այլոց արեւելեան ազգաց, որոց ցանկայինն վարիլ այնու։ Զամս ինչ առ ի փորձ ետ իւրոցն գնալ այնու, և ապա յամին 1739, Նոյեմբեր 2 հրամայեաց վարիլ նովաւ, սակաւ ինչ փոփոխութեամբ և համաձայն այնց կանոնաց հրաման ետ ընտրել իւրեանց ընդհանուր մեծաւոր, և ընտրեցաւ Հայր Պետրոս որդի քեռ Նորին Աբրահամու, որ ետ նմա կոն-

դակ հաստատութեան, զորոյ զկարևոր մասունս ի մէջ բերել ի դէպ դատիմ, և է այս «Յիսուսի Քրիստոսի ծառայ Աբրահամ Արքեպիսկոպոս Մայրաքաղաքին Բերիոյ.... յայտ լիցի... ... որդեկաց իմոց, և ուխտեալ Եղբարց հասարակութեանս մերոյ, զի ընտրեցիք վիճակաւ զՄեր որդի զՏէր Պետրոսն Հայր հասարակաց ի վերայ Ձեր. և ուխտեցիք նմա զերեք սուրբ ուխտն, կրօնաւորական կանոնի հետևելով. և խնդրէք ի մէնջ զհաստատութիւն. ըստ իրաւանց մերոց: ... ... հրամայեմ իշխանութեամբ, և հաստատեմ օրհնութեամբ հայր հասարակաց, Առաջնորդ և կառավարիչ ի վերայ Ձեր... ... Ըստ ընտրութեան Ձերոյ զմեր որդի զվերապատուելի Տէր Պետրոսն Վանահայր... Եւ աւանդեցի և յանձնեցի զբոլոր վանք Յիսուսի փրկչին ի ձեռս Վերապատուելի Հայր Պետրոսին, ներքոյ և արտաքոյ, հոգևոր և մարմնաւոր. մինչև կրկին վիճակ լինիցի ի կատարել երից ամաց, ում կրկին ելցէ վիճակն՝ նա լիցի Վանահայր և առաջնորդ, կրկին հաստատութեամբ»: Ապա դնէ Օրէնս ինչ նզովիւք հանդերձ, եթէ ոչ կանոնք պահեցին ճշդիւ, տայ արտօնութիւնս ինչ Վանահօրն, պայմանաւ դադարման ի նորոգել վիճակի: Գրեալ է կոնդակս յամսեանն նոյեմբեր, 1739:

Յետ այսպէս ի կարգի դնելոյ զիրս Վանաց Յիսուսի Փրկչին, էջ ի Լիբանանէ և չոգաւ ի Բերիա, ուր քարոզէր յաճախ զբանն կենաց Հայերէն, Տաճկերէն և Արաբերէն, և ժողովուրդն կանխէր հանապազ լսել ի նմանէ:

Մինչդեռ նա ի սոյն գործ Աստուածահաճոյ պարապեալ կայր, Կղերն և Առաջաւորք ժողովրդեան զհետ լինէին փութոյ պնդութեամբ պատրաստել յարդարել, որ ինչ առ խորհուրդն մեծ էին յանկաւորք, և յետ որոշելոյ զամենայն՝ ձեռն արկին ի գործա-

դրութիւն։ Եւ զի պակասէին յայնժամ Կաթողիկեայ Եպիսկոպոսունք, պետք եղեն ձեռնադրութիւնս առնել, և նախ ընտրեցաւ (Օգնական) Եպիսկոպոս Բերիոյ Յակոբ Վարդապետ որդի Տիրացու Յովսէփայ, զոր ձեռնադրեաց Աբրահամ Աբքեպիսկոպոս, յՆկեղեցւոջ փրանկիսկեան կրօնաւորաց, առընթեր ունելով զԳերասիմոս Բերիոյ և զԻգնատիոս Եմեսիոյ Եպիսկոպոսունս Կաթողիկեայ Յունաց։ Յետ աւուրց ինչ ընդ Յակոբայ Եպիսկոպոսի ձեռնադրեաց յՆկեղեցւոջ Սուրբ Աստուածածնի զԻսահակ Վարդապետ ի վերայ Բիւլիսիոյ Եպիսկոպոս։ Հասանէր յայնժամ ի Բերիա Մարգար Մելգոն Ամդեցի, ընտրեալ Եպիսկոպոս Մարտինոյ, զոր ձեռնադրեաց Աբրահամ Աբքեպիսկոպոս ընդ Յակոբայ և Իսահակայ Եպիսկոպոսաց յՆկեղեցւոջ Սուրբ Աստուածածնին։

Վաղ իսկ երկնէին ուղղափառք նորոգել զկաթողիկեայ նուիրապետութիւն ի Հայս, իսկ ի 1736 ամէ որոշեալ իմն էր կացուցանել հայրապետ զնա ինքն զԱբրահամ, քահանայք և ժողովուրդք համաձայն խնդրէին զայն՝ հեռաւորքն թղթովք ընտրութեան, և մերձաւորք գործակցութեամբ ընդ ժողովեալ Եպիսկոպոսաց յառաջ և զկնի. և չկայր ոք ի կաթողիկեայս, որ հակառակ ինչ միտս ցուցանէր յամենեսին ի նոսա։ Մնայր միայն ընտրութիւնն կանոնական և այն կատարեցաւ ի 26 նոյեմբեր 1740։

Ասի ի պատմութեան Մանուէլ Վարդապետի թէ իբր հինգ ամսօք յառաջ վախճանեալ էր պատրիարքն Սոյ Ղուկաս և Աթոռն մնացեալ թափուր վասն չմիաբանութեան Առաջնորդաց։

Յեկեղեցւոջ Սուրբ Աստուածածնի ժողովեցան Եպիսկոպոսունքն չորեքին, յորոց Աբրահամ ընտրեցաւ Պատրիարք, ընտրողք էին Եպիսկոպոսունքն Յակոբ, Մելգոն, և Իսահակ։ Յետ ընտրութեան իւրոյ

ձեռնադրեաց Աբրահամ քահանայս և կղերիկոսս, և ի կատարած 1740, ամի ուղևորեցաւ ընդ Սահակ Եպիսկոպոսի գնալ ի Հռովմ։

Այլ չեղև նմա առ ժամն յառաջ վարել զճանապարհ իւր մինչև ի Հռովմ, զի որպէս գրի ի գործս խորհրդարանի հաստատութեան նորա, առ սաստկութեան հալածանաց Հերձելոցն, Աբրահամ յետ ընտրութեան իւրոյ «զամիսս ինչ պատապարեցաւ ի վանս իւր, զոր կանգնեալ էր յանուն Ամենափրկչին ի Լեառն Լիբանան..... Եւ յետ այնորիկ յամին 1742. յ 13, օգոստոս, դիմեաց ի Հռովմ»։ Ի հասանել նորա անդր Սրբազան Քահանայապետն Բենեդիկտոս ԺԴ. նշանակեաց նմա տեղի բնակութեան, կարգեաց մասնաւոր ժողով ի հնգից կարդինալաց յ 9 սեպտեմբեր, 1742, և յետ լսելոյ զվճիռ նոցա, ընկալաւ զամենայն ախորժ հաճութեամբ ի 11, նորին ամսոյ։

Այսպա հիւանդացաւ Աբրահամ հիւանդութիւն մեծ մերձ ի մահ. և Քահանայապետն ինքին յայց ել նմա ի բնակարան նորին, որպէս և ինքնին յայտ առնէ Բենեդիկտոս ԺԴ, ի կոնդակի հաստատութեան նորին. և այս չէր ի սովորութեան յառաջն, և ոչ կրկնեցաւ յայնմ հետէ մինչև ցայսօր։

Այսպա յ8. դեկտեմբեր, 1742, յաւուր Տօնի Անարատ յղութեան Սուրբ Կոյս Աստուածածնին, մեծահանդէս շքով Քահանայապետն ինքնին եղ ի վերայ ուսոց նորա զվերարկուն (Պալիում) նշանակ լրութեան հայրապետական իշխանութեան։ Առատաձեռնեաց ևս արտօնութիւնս բազումս, պարգևս մեծս, և ձիրս բարեաց զեղուն։

Էին յայնժամ ի Հռովմ հայ կաթողիկեայ եպիսկոպոսունք ոմանք փախուցեալք անդր յարևելից ի պատճառս հալածանաց, որք են Սուքիաս Եպիսկոպոս, Սարգիս Եպիսկոպոս Կոստանդնուպոլսեցի որ

յամին 1737, տուեալ էր զղաւանութիւն ուղղափառ հաւատոյ առաջի Աբրահամ Աբքեպիսկոպոսի, Սարգիս Եպիսկոպոս Եւդոկիացի և Երեմիա Եպիսկոպոս, որք յամին 1714, տկարացեալ էին ի հաւատս։ Ի քննութիւն սոցին իրաց պարապեցաւ Աբրահամ Կաթողիկոս յետ հաստատութեան իւրոյ, հրամանաւ Սրբազան քահանայապետին. և եղ ի կարգի զամենայն գործս նոցա, նոյնպէս և զայլ պատկանեալս պատրիարքութեան իւրոյ։

Ի 11 յուլիսի, 1743, ել ի Հռովմայ, և խորհէր գնալ դէպ ուղիղ ի Կոստանդնուպոլիս ըստ բաղձանաց իւր և ազգին։ Ունէր ի ձեռին թուղթս ընծայութեան առ դեսպանս կաթողիկեայ պետութեանց Եւրոպայ. և Կոստանդնուպոլսեցիք արարեալ էին պատրաստութիւնս առ ի ընդունել պատուով, և յայլ պէտս կարևորս։ Հալածանք միւսանգամ սաստկացեալք, և այլ ևս խոչք խափանարարք հարկ արարին փոխել առ ժամն զմիտս իւր։ Բաժանեալ Եպիսկոպոսունք ի Սիս՝ ունելով իւրեանց Պատրիարք, արգելուին զմուտ նորա անդր։ Իսկ ի Բերիա ի նմին 1743 ամի, գրաւեալ էր միւսանգամ Եկեղեցի Սուրբ Աստուածածնին ի բաժանելոց։ Սմին իրի դեգերեալ յԱլիկուռնա և յԱղեքսանդրիա, ի 6, հոկտեմբեր, եհաս ի վանս Ամենափրկչին ի Գրէմ։ Կացեալ զժամանակ մի ի Լիբանան հոգ տարաւ այլ և այլ տեղեաց ի պատրիարքութեան իւրում, յորս պակասէին քահանայք, և այլ իրք. արար ձեռնադրութիւն, որոց պատրաստեալն էին ի մեծ և ի փոքր աստիճանս, և որ այլն ևս։

Փորձ փորձեաց ապա միւսանգամ գնալ հաստատիլ ի Կոստանդնուպոլիս, այլ և յայս նուագ նոյն պատճառք և դժուարութիւնք խոչ եղեն նմա։ Սմին իրի դարձաւ յետոյ յԱղեքսանդրիոյ Եգիպտացւոց,

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ուր հասեալ էր, և եկն անդէն ի վանս Ամենափրկչին, և անդ անցոյց այնուհետև զմնացուած կենաց իւրոց։

Յետ այնորիկ պարապեցաւ զժամանակ մի ի չափու ունել զՄարգար Մելքիոր Թուխմանեան Արքեպիսկոպոս Մարտինոյ, որ ի հնազանդութենէ Հայրապետին ազատ զանձն համարէր։ Եհաս բանն յատեան Սուրբ Աթոռոյն, որ որոշեաց զվէճն ի նպաստ Աբրահամու, և հարկեցաւ Մարգար խոնարհիլ ընդ ձեռամբ Հայրապետին իւրոյ, և ճանաչել զնա իւր վերնագոյն։

Ձեռնադրեաց բազում քահանայս որ ի պէտս վանաց, և որ՝ առաքելութեանց։ Եւ ի վերջին ամի կենաց իւրոց Եպիսկոպոսս երիս, զՅովսէփ Վարդապետ Ամէմեան Բերիացի ի վերայ Եդեսիոյ, զՀայր Պօղոս Վարդապետ Կոստանդնուպօլսեցի ի կրօնաւորաց անտի բնակելոց ի վանս Ամենափրկչին՝ ի վերայ Դամասկեայ, զՊետրոս Վարդապետ զիւր քեռորդի ի վերայ Անթապայ։

Խորհեցաւ և կառուցանել միւս այլ վանս ուրոյն ի վանացն, որ ի Գրէմ, ի բնակութիւն պատրիարքին, եպիսկոպոսաց և ուխտեալ քահանայից։ Ասի յոմանց, եթէ առ նովաւ իսկ սկիզբն լեալ էր հիմնարկութեան այնր, յայն յեցեալ, զի ոմանք, որ յառաքելութիւնս, գրելով առ բարեկաման՝ հարցումն արարեալ են. Զիարդ կայ առողջութիւն Վեհին, աւարտեցա՞ւ շինուած վերին վանաց, ելէ՞ք դուք անդր, որ այնպէս իմն ցուցանէ, թէ այն վաղ իսկ սկսեալ էր։ Խորհուրդ կառուցանելոյ նոր վանս կայր արդէն իսկ, որոշեալ ևս էր տեղին և այլ ամենայն, որ կարևորն էր. և եղեալ էին բանք ընդ Տեարս երկրին, զոր առ շինութիւն՝ ի ձեռս բերել ըղձանային. այլ մինչչև ի գործ անդր մատուցեալ՝ կանխեաց օր-

հաս մահու Աբրահամու Պետրոսի Առաջնոյ պատ-
րիարքի Կիլիկիոյ. և հանգեաւ ի Տէր Հայրապետն
խոստովանող, առնուլ զվարձս բազմապատիկ վաս-
տակոց իւրոց ի 1 հոկտեմբեր, 1749, և թաղեցաւ
յԵկեղեցւոջ վանաց Յիսուսի փրկչին ի Գրէմ. եկաց
յԱթոռ պատրիարքութեան զամս իբր ինն։

Յետ վախճանին եպիսկոպոսունք փոյթ կալան ի
գլուխ հանել զսկսեալ գործն ի պատրաստութիւն
տեղւոյ շինութեան նոր վանաց, և յ13 հոկտեմ-
բեր, 1749, կնքեցին Էլ խազէն Շէյխքն Մըշրէֆ և
Անթուն Գապլան զմուրհակն յանուն Յակոբայ, Պետ-
րոսի, Պօղոսի և Յովսէփայ Եպիսկոպոսաց Հայ կա-
թողիկեայց վասն մասին միոյ բլրոյն ի Պզոմմառ
ընդ արևելս վանացն Գրէմի, 350 մեթրօ բարձր քան
զայն և յերեսաց ծովուն 900 մեթր։ Եւ յաւուրն
երկրորդ ձեռն արկին յընտրութիւն նոր պատրիարքի։



ՅԱԿՈԲ Դ. ՊԵՏՐՈՍ Բ.

ՅՈՎՍԷՓԵԱՆ ԲԵՐԻԱՅԻ

2/14 Հոկտ 1749 — 1753

Զամս իբր երեսուն և հինգ գործակից էր յամենայնի նախորդին իւրոյ Աբրահամու յարքեպիսկոպոսութեան նորա և ի պատրիարքութեան, ձեռնադրեալ էր ի նմանէ քահանայ. և ապա յ 3, մայիսի 1740 Արքեպիսկոպոս: Զէ սա ի չորից անտի եղբարց անուանելոց որդիք Մուրատի. այլ ուրոյն ի նոցանէ կոչեցեալ՝ Յովսեփեան: Սատար եղև սա բազմօք շինութեան վանաց Ամենափրկչին ի Գրէմ: Շրջեցաւ ի բազում քաղաքս և ի տեղիս քարոզութեամբ կաթողիկէ հաւատոց, ոչ սակաւք դարձան յուղիղ վարդապետութիւն. մանաւանդ յԱնկիւրիա ուր երկու եպիսկոպոսք ընկալան զուղղափառ հաւատս ընդ բազմութեան ժողովրդեան. գոհութեամբ յիշատակին այս և այլ այսպիսի գործք նորա ի կոնդակի հաստատութեան, յորում Բենեդիկտոս ԺԴ. անուանէ զնա առաքեալ Անկիւրացւոց:

Զկնի երեքտասան աւուրց պարապութեան ի 14, հոկտեմբեր. 1749, գումարեցան յԵկեղեցւոջ Վանաց Փրկչին Ցիսուսի ի Գրէմ, Յակոբ Բերիոյ, Սահակ Քիլիսի, Պօղոս Դամասկեայ, Յովսէփ Եդեսիոյ և Պետրոս Անթապայ, Արքեպիսկոպոսք և Եպիսկոպոսք, և ընտրեցին ի պատրիարք Տանն Կիլիկիոյ, զՅակոբ Արքեպիսկոպոս Բերիոյ որ անուանեցաւ Յակոբ

Պետրոս Բ.։ Բացակայ էր միայն Մարգար Մելգոն Արքեպիսկոպոս Մարտինոյ։

Նա ինքն Բենեդիկտոս ԺԴ. Քահանայապետ էր յորմէ յ13 սեպտեմբեր 1750, ընկալաւ նորընտիր Հայրապետն ձեռամբ փոխանորդին իւրոյ ի Հռովմ զհաստատութիւն և զվերարկուն զոր հանդիսիւ մեծաւ զգեցաւ ի յիշատակեալ եկեղեցւոջ Ամենափրկչին։

Որպէս ի վեր այսր ասացաւ, աւուրբ յառաջ քան զընտրութիւն Յակոբայ Կաթողիկոսի ստացեալ էին զփոքր մասն մի բլրոյն որ յԱգարակին (մազրաա) Պզոմմառի։ Յետ կատարելոյ ընտրութեան, առին զնոց արծաթոյ զայլ ևս մասունս երկրի առ երի առաջնոյն, և անդէն սկիզբն արարին հիմնել զնոր վանս, առ ի բնակութիւն իւրեանց և այլոց միաբան քահանայից. և այսմ առաւելապէս զհետ էին Եպիսկոպոսունք, և ինքնին Հայրապետն ի վերայ կացեալ գործոյն, քաղցր բանիւք քաջալերէր զարհեստաւորսն և զմշակս, այնպէսզի չև աւարտեալ ամին կարի իմն յառաջացեալ էր շինուածն, որպէս յայտ է յարձանագրութենէն, որ կայ դէպ յելս արևու, որ և է «Կերտեցաւ վանս Գերափայլ ձեռամբ Պատրիարքին մաքրափայլ Յակոբ կաթողիկոս կոչեցեալ յանուն Աստուածածնին կառուցեալ ՌՉԽԹ.» շինուած քարեղէն, հաստակերտ. սրահ կամարակապ մեծակառոյց լայն և բարձր, պահարանք են ընդարձակք յորմն հիւսիսի, և ի հարաւոյ սրահիս տողեալ վեց սենեակք կամարակապք։ Ապա կոչեցեալ առ ինքն զկրօնաւորսն իւր, խօսեցաւ նոցա խրատ գեղեցիկ և յորդոր ի պահել զգուշութեամբ զկանոնս իւրեաց որ է իսկ մեծի Հօրն Անտոնի Աբբայի, և օրհնեալ զամենեսին եթող ի նոսա ի կրօնաւորս իւր զվանքն Ամենափրկչին, և մեկնեալ անտի եկ ի նոր վանս, զոր նուիրեալ էր Վերափոխման Մօր Տեառն. ընդ նմա

ելին ի կրօնաւորաց անտի Հայր Բարսեղ, և Հայր Թովմաս։ Իսկ յետոյ ել ընդ նմա միայն Սահակ Եպիսկոպոս։ Յովսէփ եպիսկոպոս գնաց յայցելութիւն ի Հռովմ. և մնաց անդ զամս հնգետասան և աւելի, ուր կարգեցաւ օգնական (1750) ձեռնադրիչ Սրբ եպիսկոպոսին Վրթանիսի, որ ծերացեալն էր, յորոյ ի վախճանելն (1760) ինքն կարգեցաւ ձեռնադրիչ հայ ծիսի ի Հռովմ, ուր և հանգեաւ ի Տէր յամին 1767։ Պօղոս Եպիսկոպոս և Հայր Միքայէլ առաքեցան ի Կոստանդնուպօլիս. և մնացին անդ ցմահ Յակոբ Կաթողիկոսի։ Պետրոս Եպիսկոպոս գնացեալ ի Բերիա՝ մնաց անդ տարի մի, և ապա եկեալ ի Վերիտոն վախճանի, և ածեալ զմարմին նորա թաղեն յեկեղեցւոջ Սմենափրկչին ի վանս որ ի Գրէմ։

Յետ ելանելոյ ի նորաշէն վանս կառուցին դամբարան, ևս սանդուխ ելանելոյ ի սրահ զոր խորհէին շինել ի վերայ առաջնոյն։ Հիմն արկին եկեղեցւոյն, նոյնպէս և ջրհորոյն։ Տնկեցին թթաստանս և այգիս. գնեցին երկու անդս կամ թթաստանս յԱշղուտ գեղջ։ Եւ ինքեանք վարէին կեանս աղքատութեամբ. ըստ օրինակի նախնի Միաբանակեցաց։

Կրօնաւորք, որ ի վանս Գրէմի բազմացեալ էին հետզհետէ. այնպէս զի իբրև թողոյց հայրապետն ի կրօնաւորս զայն, թիւ միաբանիցն հասանէր ցերեսուն և հինգ, քահանայք և ուխտեալ աշխատաւոր եղբարք. Սոքա ամենեքին աղերս արկին թախանձանօք կաթողիկոսին Յակոբայ հաւանիլ և հաստատել զկանոնս կրօնի իւրեանց, զոր և կատարեաց նա ժողովով Եպիսկոպոսաց յ 30. աւուր ամսեանն յունիսի յամին 1752, «..... յետ արժանաւոր քննութեամբ քննելոյ զկանոնս, զօրէնս, զսահմանադրութիւնս, որք պարունակին յայս գիրս.... խորհրդակցութեամբ ժողովոյ եպիսկոպոսաց մերոց հաստատեցաք զնոսա.....»։

Գիրան
Արսակ Ալպոյաճեանի
Տանիրէ — Սաքարիա

Եւ յառաջ քան զվերջին հիւանդութիւն իւր ձեռնադրեաց Եպիսկոպոս Ամասիոյ զԲարսեղ Վարդապետ Բերիացի որդի Տիրացու Գէորգայ ի կրօնաւորաց անտի, որ ելեալ էր ի նոր վանս ընդ Յակոբայ կաթողիկոսի։ Եւ Եպիսկոպոս Մարաշոյ զՂուկաս Վարդապետ Անթապցի։ Ընտրեալ էր և զՀայր Միքայէլ Գասպարեան յԱրքեպիսկոպոս Բերիոյ և և կոչեցեալ իսկ ի Կոստանդնուպօլսէ, ուր գտանէրն նա ընդ Պօղոս Եպիսկոպոսի, այլ կանխեալ օրհասին կնքեաց զարդիւնական կեանս ի 15, մայիսի 1753, և թաղեցաւ յԵկեղեցւոջ Վանաց Ամենափրկչին ի Գրէմ։ Բազում գովութիւնս խօսի զնմանէ Մանուէլ Վարդապետ ի պատմութեան իւրում. որպէս և այլք. մանաւանդ զհեզութենէ և զքաղցրութենէ բարուցն, զգթութենէ առ աղքատս, ունէր փոյթ մեծ ի բարգաւաճանս Հօտին իւրոյ առաքինի ի վարս ճոխացեալ բազում ձրիւք, զուն գործեաց ի կառուցումն Վանաց Փոխման Սուրբ կոյս Աստուածածնին, առ որ ջերմ էր յոյժ ի պաշտօն և ի մեծարանս. փայլեաց սրբակրօն վարուք առաջի մեծի և փոքու և օրինակ բարի եկաց ամենեցուն։

Սա եղև մին ի գլխաւոր հիմնարկուաց Զմմառեան և Անտոնեան Միաբանութեանց։ — Յետ ժամանակի Անտոնեան կրօնաւորք փոխադրեցին զմարմին սորա որպէս և զԱբրահամու Պետրոսի Առաջնոյ, ի Հռովմ, յԵկեղեցի Վանաց իւրեանց անդ յանուն Սուրբ Գրիգորի Լուսաւորչի, ուր կայ ցարդ, հակառակ բանից ի լրագիրս. որով ուղղել կարծեցին զպատմական վրիպակ, յօդուածոյն որ հրատարակեցաւ յ3872, թիւ Մէճմուայի ախբար լրագրոյ սեպտեմբեր 25/9, հոկտէմբեր, 1901։ Ըստ այսմ չերկբայիմ ասել թէ ստոյգ էր, որ գրեցաւն յայնժամ, և որ երկրորդեցաւն արդ ատէն։

ՄԻՔԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ Գ.

ԳԱՍՊԱՐԵԱՆ ԲԵՐԻԱՑԻ

11 Ցուլիս 1753 – 1780

Զկնի ութ աւուրց վախճանի Յակոբայ Կաթողիկոսի՝ հասին ի Վանս Պօղոս Եպիսկոպոս Դամասկեայ, և Հայր Միքայէլ կրօնաւոր Անտոնեան, ընտրեալն յեպիսկոպոսութիւն Բերիոյ, որ յամաց հետէ կային ի Կոստանդնուպօլիս և ընկալեալ էին հրաման ի հանգուցեալ լուսաւոր հոգւոյն դառնալ անդրէն ի Լիբանան։ Զկնի աւուրց հասանելոյ նոցա, եպիսկոպոսունք ժողովեալք ձեռնադրեցին զՀայր Միքայէլ Արքեպիսկոպոս Բերիոյ։ Եւ ապա յետ երեսուն և ութ աւուրց պարապութեան ի 23 յունիսի 1753, ժողովեցան յԵկեղեցւոջ Ամենափրկչին ի Գրէմ, Իսահակ Քիլլիսի, Պօղոս Դամասկեայ, Ղուկաս Մարաշոյ, Բարսեղ Ամասեայ և Միքայէլ Բերիոյ Արքեպիսկոպոսք և Եպիսկոպոսք և ընտրեցին զսա ինքն զՄիքայէլ Պատրիարք Տանն Կիլիկիոյ, որ անուանեցաւ Միքայէլ Պետրոս Գ.։

Ուրախ եղև Քահանայապետն Բենեդիկտոս ԺԴ., զի կրօնաւորն ընտրեցաւ Պատրիարք, այլ չեղև նմա հաճոյ գործ Եպիսկոպոսացն, որք ձեռնադրեցին և անուանեցին զնա Արքեպիսկոպոս Բերիոյ։ Արդարև՝ ասէ Քահանայապետն, իրաւունք են Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց ընտրել զՊատրիարք իւրեանց, այլ ոչ է նոցա, թէև ժողովեալ՝ ընտրել կամ կար-

գել զԱրքեպիսկոպոս կամ Եպիսկոպոս, զի այդ իրաւունք պատկանի պատրիարքին, յետ ընտրութեան և հաստատութեան նորին։ Պատուէր խիստ ի վերայ դնէ զի մի երբէք այնպիսի ինչ ի գործ դիցի այնուհետև։ Գովէ յոյժ զընտրեալն և զընտրողսն այլոմն ամենայնիւ, և մեծաւ հանդիսիւ տայ նմա զվերարկուն՝ յանձն փոխանորդին նորա առ այն կարգելոյ, որ էր Հայրն Տէզիտերքոս Գասապաշեան ի կարգէ Սրբոյն Ֆրանչիսկոսի, ի 6 մայիսի 1754։ Յորոյ ի հասանելն՝ զգեցաւ զայն Միքայէլ Կաթողիկոս, տօն մեծ և շքեղ կատարեալ ըստ սովորութեան։

Կամէր յառաջ վարել արագ զշինուածս զորոց զհիմունս արկեալ էր նախորդ իւր, և յայս սակս, որպէս և առ ի հոգալ զպարէն Միաբանից, կրեաց նեղութիւն բազում, և խորհէր գտանել հնարս ինչ զամս չորս տառապեալ և մտահոգ եղեալ, ապա յամին 1758, որոշեաց գնալ ի Հռովմ. ձեռնադրեաց զՅովհաննէս Վարդապետ զմիւռնացին Արքեպիսկոպոս Սմղնոյ, զոր ընդ իւր առեալ գնաց անդր յայցելութիւն Կղեմայ ԺԳ. որ զկնի Բենեդիկտոսի ԺԴ, նստեալ էր յԱթոռ սրբոյն Պետրոսի։ Մնաց անդ զամս երկուս, զի էին ևս բազում վէճք վասն սահմանաց իրաւասութեան՝ ընդ մէջ իւր և Առաքելական փոխանորդին որ նստէր ի Կոստանդնուպոլիս. ճիգն դնեն երկուստեք զամս բազումս և ելանէր վճիռ ի սուրբ ժողովոյն յ30 ապրիլ, 1759, որ յայտ առնէր. Եթէ կաթողիկեայ Հայք բնակեալք ի Պոնտոս, ի Բիւթանիա և ի Գաղատիա, պատկանէին իրաւասութեան Առաքելական փոխանորդին Կոստանդնուպոլսի։ Զկարաց գոհ լինել Միքայէլ կաթողիկոս ընդ այս ամփոփումն, և դարձեալ երկարեցաւ վէճն զամս բազումս և ել երկրորդ վճիռն նոյնիմաստ,

ի 5 յուլիսի, 1769, յորում յայտնապէս տուեալ լինէին պատրիարքին Եւդոկիա և Բրգնիք, այլ տակաւին զհետ էր առնուլ զտեղիսդ զժամանակ մի ևս։

Կացեալ կաթողիկոսին, որպէս ասացաւ, զամս երկուս ի Հռովմ և նպաստաւորեալ իւէք իւիք գնաց ի Լիվոռնո, անդ ևս եգիտ յաջողութիւն յիրս իրս, և դարձաւ ի Լիբանան ի վանս փոխման կուսին ի Զմմառ։ Եւ աստ հայրապետն, եպիսկոպոսունք և միաբան քահանայք ձեռն ի ձեռն տուեալ կառուցին զեկեղեցի վանացս նուիրեալ ի պատիւ փոխման Աստուածածնին յերկինս, սրբատաշ քարամբք, կամարակապ և գմբեթայարկ, որ աւարտեցաւ յամին 1771, որպէս տեսանի յարձանագրին, որ ի վերայ Սրեմտեան դրան եկեղեցւոյն, որ ունի զայս ձև բանի.

«Կամօք հրամանիւ երկրպագելի միասնական Երրորդութեան, և ձեռնտու արագահաս միջնորդիւ Նորին օգնութեան, կերտեալ եղև տունս այս Նորա ի գովութեան, ձեռամբ հանուրց հայրապետի ուղղաղաւան սրբոյ Աջեան, սրբազան Միքայելի կաթողիկոսի Պետրոս երրորդեան, յանուն կուսի Աստուածածնի մաքրագունի տուն սրբութեան, յամի տեառն 1771. ՌՄԻ»,

Ի հիւսիսակողմն եկեղեցւոյն շինեցաւ աւանդատուն, և ի վերայ սենեակ մեծ, և առ երի այնց սրահ ի վերայ մառանին ԺԲ. սենեկօք յարևմտից յարևելս ձգեալ ընդ երկայնութիւն եկեղեցւոյն ի հիւսիսոյ։ Եւ յառաջքան զայսոսիկ աւարտեալ էր ի հարաւակողմն եկեղեցւոյն, նոր սրահ ի վերայ հնոյն վեց սենեկօք և կամարակապ սրահիւ։ Շինեցաւ ևս ջրհոր կամ ջրամբար մեծ զառաջեաւ գաւթի եկեղեցւոյն յարևմըտից կուսէ, և ի կառուցումն այսոցիկ ամենայնի աշխատ եղեն յոյժ ինքն և իւրքն մեծաւ դժուարութեամբ և զոհողութեամբ։

Յետ այնորիկ գնեցին թթաստան մի ի Պաթհա գեղջ, և միւս այլ յԱրապլլզէն. Բարսեղ եպիսկոպոս, որ ունէր զփոխանորդութիւն կամ զԱթոռակալութիւն տնկէր տունկս թթենեաց և ջանայր ի բարւոքումն կալուածոց։ Յամին 1770 Ներսէս Սարգիս հայ ազգաւ պարգևեաց զագարակն Շարամպարէյ ի Զղարթա։

Ի սկզբան անդ պատրիարքութեան Միքայէլի մեկնեալ ի վանաց Պօղոս եպիսկոպոս Դամասկեայ գընացեալ էր յարևմուտս, այլ ի ճանապարհի կնքեաց զկեանս իւր հասեալ ի կղզին Սարտենիոյ։ Ի նմին ժամանակի և Ղուկաս եպիսկոպոս Մարաշոյ գնաց ի Կոստանդնուպոլիս, և մնաց անդ մինչև ցմահ իւր՝ որ եղև յամսեանն օգոստոսի 1795։ Ի խոր ծերութիւն հասեալ էր և Իսահակ եպիսկոպոս Փիլիսի, որ զամենայն ժամանակս եպիսկոպոսութեան իւրոյ բնակեալ էր ի վանորայս, նախ ի Գրէմ և ապա ի Զըմմառ, սրբակրօն վարուք օրինակ բարի ամենեցուն լեալ, և ննջեաց ի Տէր յամին 1768։

Յովհաննէս Զմիւռնացի որ յետ ձեռնադրութեան իւրոյ գնացեալ էր ընդ Միքայէլ կաթողիկոսի ի Հռովմ, իբրև դարձաւ անտի, գնաց ի Կոստանդնուպոլիս և մնաց անդ։

Ձեռնադրեաց Միքայէլ կաթողիկոս զայլ ևս եպիսկոպոսունս, որոց անուանքն են.

Պօղոս վարդապետ Լէոնեան Ախալցխացի աշակերտ Ուրբանեան դպրոցի, ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի վերայ Տայոց աշխարհին, ուր կրեաց բազում հալածանս, տարեալ եղև յԷջմիածին, արկաւ անդ ի բանտ, յորմէ զերծեալ խնամովքն Աստուծոյ, գնաց ի Հռովմ, և ի 10 սեպտեմբեր, 1774 կարգեցաւ ձեռնադրիչ հայ աշակերտաց ի մայրաքաղաքի անդ և յետ մեծասան ամաց վախճանեցաւ յամին 1785։

Յովհան վարդապետ Ամդեցի ձեռնադրեցաւ ի վերայ Զմիւռնիոյ, գնաց ի Բերիա, յԱմիդ և ի Կոստանդնուպոլիս, ուր և մեռաւ։

Պօղոս վարդապետ Գուպէեան Բերիացի ի վերայ Դամասկեայ, որ առաքեցաւ յԵգիպտոս, և մնաց անդ զամս մետասան։

Յովհաննէս վարդապետ Թասպառեան ի վերայ Մարտինոյ։ Եկաց յԱթոռ իւր զամ մի, գնաց ի Հռովմ և անդ վախճանեցաւ. և ընտրեցաւ փոխան նորա

Յովսէփ վարդապետ Պալիթեան աշակերտ Ուրբանեան դպրոցի և ձեռնադրեցաւ ի Միքայէլ կաթողիկոսէ։ Ի դարձին յԱթոռ իւր, առաքեցաւ ի սուրբ ժողովոյն տարածման հաւատոյ ի Պաղտատ, առ ի քննել զգործս Նեստորականաց և կաթողիկեայ պատրիարքի նոցա։ Եւ երբ դառնայր անդրէն ի վիճակ իւր հարաւ ի խորշակէ և ննջեաց ի տէր ի Մօսլ քաղաքի, զամս չորս և եթ կացեալ յիշխանութեան իւրում։

Եւ կարգեցաւ ի Միքայէլ Կաթողիկոսէ եպիսկոպոս Մամպռոյ Պետրոս վարդապետ Եղիազարեան Անկիւրացի, որ կալաւ զաթոռն զամս ԺԲ.

Ձեռնադրեաց ևս զԳրիգոր վարդապետ Փիլիսցի եպիսկոպոս Ատանոյ, որ առժամն մնաց ի վանս։

Մեծաջան հայրապետն փոյթ մեծ կալաւ մարզել զպատանիս եկեալս ի կղերիկոսութիւն և ինքնին իսկ հոգ տանէր ուսման նոցա և հրահանգաց, որպէս և ի ձեռն բանիբուն վարդապետաց, և զի պակասէին տեղի և այլ կարևորք ի պարէն և յայլ պէտս, գրեաց կոնդակս և կարգեաց իւր փոխանորդ զԱնդրէաս վարդապետ Ուզունեան. այլ յաւուրս նորա չեղև մեծ ինչ յաջողութիւն։

Յուզէին տակաւին վէճք վասն Եւդոկիոյ և Բեր-

գնիկոյ, նաև յետ վճռոցն 30 ապրիլ, 1759, և ի 5 յունիսի. 1769, յորս յայտնապէս նշանակեալ էին, թէ այնք պատկանին պատրիարքին Կիլիկիոյ։ Սմին իրի ի 22 դեկտեմբեր, 1776, բողոք կալաւ առ սուրբ ժողովն, յորմէ ընկալաւ պատասխանի յ19, ապրիլ 1777. օրինակ զայս։ «Կարի ինն դժկամակեցան վասն. ընկերակիցք ի լսելն .... թէ Գեր. Աթանա ու Մէրաս միջամուխ լինի ի հոգևոր կառավարութիւն Հայոց բնակելոց յԵւդոկիա և ի Բրգնիք. որք անշուշտ Ձերումդ իրաւասութեան պատկանին։ .... գրեացի առ նա ինքն զի ի բաց կացցէ գլխովին՝ ձեռնամուխ լինելոյ յայսմ հետէ ի հայ ազգին գըտեալս ի նախասացեալ տեղիսդ. և մի առաքել բնաւ անդր քահանայս։ ....» Եւ այսու որոշողութեամբ վերջ եղև ամենայն վիճից, որ վասն Եւդոկիոյ և Բրգնքոյ։

Իսկզբան հայրապետութեան Միքայէլի էին ևս խնդիրք ինչ վասն Միջագետաց և Եգիպտոսի, որք աւագութեան սրբոյ Աթոռոյն ի գլուխ ելին ի նպաստ պատրիարքութեան։

Զամս իբր ԻԷ. կալեալ զԱթոռն լի արդեամբ հանգեաւ ի տէր Միքայէլ Պետրոս Գ. ի 16, ամսեանն նոյեմբերի յամին 1780։ Բազում գովութիւնս խօսի զմանէ քահանայապետն Պիոս Զ. ի կոնդակի հաստատութեան յաջորդի սորա յիշելով և զբանս Բենետիկտեայ ԺԴ. թաղեցաւ յեկեղեցւոջ սուրբ Աստուածածնի ի Պծումմառ։

Յաւուրս սորա նատան ի Սիս հետ զհետէ Միքայէլ և Գաբրիէլ, և որդի տէր Մարկոսի եղբօր սոցա՝ Եփրեմ Ա։ Իսկ յԷջմիածին Մինաս, Աղեքսանդր, Սահակ, Յակոբ, և Սիմոն և ի Կոստանդնուպօլիս կացին պատրիարք, Մինաս, Գէորգ, Յակոբ Նալեան Մանուէլ ոմն անուն երէց, այր խոովայոյզ, գրգռեաց

հալածումն ընդդէմ կաթողիկեայ Հայոց, իբր թէ լրտեսք լցեն։ Իսկ Յակոբ պատրիարքն գրեաց թուղթ յարգութեան ի Հռովմ յամին 1761, յորմէ առաւել ևս գրգռեցաւ երէցն այն դառնացեալ, սկսաւ զբրպարտել և զպատրիարքն իսկ, այլ նա զօրացաւ և պաշտպան ևս եկաց կաթողիկեայց։

ԲԱՐՍԵՂ Բ. ՊԵՏՐՈՍ Դ.

ԱՎԳԱՏԵԱՆ ԲԵՐԻԱՅԻ

19 Հայմ. 1780 – 1788

Երեք միայն եպիսկիպոսունք գտանէին ի վանս ի մահուն Միքայէլ կաթողիկոսի, այն է Բարսեղ Ամասիայ, Պօղոս Դամասկեայ և Գրիգոր Ատանոյ, ի ժողովիլ սոցա ի միասին. խորհեցան խորհուրդ ձեռնադրել եպիսկոպոս զԳաբրիէլ վարդապետ Ղազիւլեան, իբր զի ընտրեալ էր ի հանգուցեալ պատրիարքէն յանուն Աթոռոյն Բերիոյ, զոր ի գործ եղեալ նախ, ապա յետ քսան և հինգ աւուրց պարապութեան ի 1 դեկտեմբեր 1780, գումարեցան ի ժողով յեկեղեցւոջ վանաց փոխման կուսին ի Պզոմմառ, եպիսկոպոսունք յիշատակեալք ի վեր և ընտրեցին զԲարսեղ եպիսկոպոս Ամասիոյ, որ կոչեցաւ Բարսեղ Պետրոս Դ։ Երիցագոյն էր սա ի մէջ եպիսկոպոսաց և կացեալ առ երիւք իւրովք նախորդօք, օգնական և ձեռնտու եղև նոցա յամենայնի, վարեալ զայլ և այլ պաշտամունս ի քահանայութեան և յեպիսկոպոսութեան, պերճացեալ իմաստութեամբ, սրբութեամբ և խոհականութեամբ։ Գովէ զնա մեծապէս ի կոնդակի հաստատութեան նորա Պիոս Զ. խոստովանող քահանայապետ։ Տուչութիւն վերարկուին եղև ի 21 յունիսի, 1781, ի ձեռն փոխանորդի առ այն կարգելոյ, որպէս էր իսկ ի սովորութեան։ Եւ ի հասանել այնր առ ինքն զգեցաւ շքեղ հանդիսիւ։

Բացակայ գտան յընտրութեան սորա Ղուկաս եպիսկոպոս Գերմանիկոյ, և Պետրոս Մամպուտայ վան հեռաւորութեան վայրացն, և վան այլ ևս դժուարութեանց։

Շինեցաւ առ սովաւ ներքնատուն կամարակապ, վեց յաղթ ոտնակապօք, արտաքոյ վանաց որ անուանէր իջևան (Մէնչուլ), յարևելից կուսէ, երեսուն կանգուն յերկայնութիւն և ութ ի լայնութիւն։ Տնկեցաւ և թթատան ընդարձակ հանդերձ նորաշէն տամբ։

Փոյթ մեծ ունէր բարգաւաճանաց ընծայարանին, սմին իրի հաստատեաց զփոխանորդութիւն Անդրէաս վարդապետի Ուզունեան, որ ծանօթացաւ ընդ Եդուարդ Աղայի Ռաֆայելեան և Միքայէլ Աղայի որդւոյ տեառն Յովհաննու Բաբումեան, մեծամեծ հայ վաճառականաց ի Մատրաս յամին 1786։ Կամէր կառուցանել սրահ նոր ի հիւսիսոյ վանաց, կից առաջնոյն, ներքնատուն և վերնատուն վան աշակերտաց, այլ ոչ ժամանեալ ձեռն ի նոյն արկանել, յանձն արար զի յաջորդն իւր ի գլուխ տարցէ զայն։

Իսկզբան անդ հայրապետութեան Բարսղի յամին 1780 Զաքարիա պատրիարք Կոստանդնուպօլսի յաւոյց հալածան. ընդդէմ կաթողիկեայ Հայոց զոր սատակացոյց յոյժ յաջորդ նորա Յովհաննէս Համատանցի յամին 1781, որպէս գրէ Աւետիս Պէրպէրեան։ Ժողովէր իբրև հայր գթած առ ինքն կաթողիկոսն սուրբ զփախուցեալսն, և խնամ տանէր նոցա։ Առաքէր քահանայս ի Միաբանից Զմմառի, և ի կրօնաւորաց Գրէյմի, զորս ձեռնադրէր հետզհետէ. առ ի մխիթարութիւն հօտին իւրոյ տագնապելոյ ի բազում տեղիս յեղբայրատեաց Առաջնորդաց։

Յաւուրս սորա Գրիգոր Արքեպիսկոպոս Ատանոյ ի հրամանէ սրբոյ ժողովոյն և հաւանութեամբ պատ-

ըիարքին իւրոյ շրջեցաւ նուիրակութեամբ ի բազում տեղիս, մանաւանդ ի Մեծն Հայս, ինամ տանելով հաւատացելոց, և յամենայն ուրեք կատարելով զգործ առաքելոյ Քրիստոսի, ձեռնադրեաց ևս՝ քահանայս և երիցունս ըստքաղաքաց, ուր ուրեք պէտք էին։ Եւ մինչ նա դառնայր անդրէն ի վանս, հանգեաւ ի Տէր Արքեպիսկոպոսն Մամպրտոյ Պետրոս Եղիազարեան, և կղերն և ժողովուրդ այնր քաղաքին աղերս մատուցանեն ի Հռովմ, զի սա ինքն Գրիգոր եպիսկոպոս լիցի իւրեանց հովիւ։ Այլ հազիւ հասեալ նորա ի վանս, կնքեաց սրբակրօն հայրապետն Բարսեղ Պետրոս զկեանս իւր և հանգեաւ ի տէր ի 5. փետրուարի, 1788, ծանրացեալ հասակաւ և զեղուն առաքինութեամբք, զորս եթող իւրոցն յիշատակ բարի ի հաճոյս Աստուծոյ։ Եղաւ ի դիր հանգստեան յեկեղեցւոջ վանաց փոխման սուրբ կոյս Աստուածածնին ի Պզոմմառ։



ԳՐԻԳՈՐ ԺԲ. ՊԵՏՐՈՍ Ե.

ՔԻՒԲԷԼԵԱՆ ՔԻԼԻՍՑԻ

29 Ապրիլ 1788 – 1812

Ի մահու անդ Բարսղի կաթողիկոսի՝ պարապեալ էր Աթոռն Մամպռոյ, որպէս ասացաւ։ Ղուկաս եպիսկոպոս կայր ի Կոստանդնուպոլիս ծերացեալ յոյժ, որ և կնքեաց անդ զկեանս իւր յամսեանն օգոստոսի 1795, Գաբրիէլ եպիսկոպոս գնացեալ էր ի վիճակ իւր ի Բերիա, ոչ յայտնի այլ իբր ի ծածուկ վանն ահին համազգեաց, ուստի և կային ի վանս երկու եպիսկոպոսունք միայն, Պօղոս Դամասկեայ, և Գրիգոր Ատանոյ, որ նորոգ դարձեալ էր ի Նուիրակութենէ իւրմէ։ Սոքա երկոքին ազգ արարին Արքեպիսկոպոսին Բերիոյ փութալ գալ ի վանս, և նա ոչ անազանեաց հասանել։ Հաւատացեալք Մարտին քաղաքի զհետ էին զԳրիգոր զԱրքեպիսկոպոսն Ատանոյ ունել իւրեանց հովիւ, այլ ոչ այն ել ի գլուխ, զի եպիսկոպոսունքն յիշատակեալք, Պօղոս, Գաբրիէլ և Գրիգոր, ի խորհուրդ մտեալ բազում անգամ ապա յետ երից ամսոց և հինգ աւուրց պարապութեան ի 11 ամսեանն մայիսի յամին 1788, Արքեպիսկոպոսն Ատանոյ ընտրեցաւ պատրիարք, և կոչեցաւ Գրիգոր Պետրոս Ե. Այր սքանչելի և ըստ սրտին Աստուծոյ, որպէս անուանէ զնա Ղևոնդ Արքեպիսկոպոս Մելիտինոյ։ Ի 15. դեկտեմբերի 1788, եղև տուչութիւն վերարկուին ի Պիոսէ Է. ի ձեռն փոխա-

նորդի, հանգոյն նախորդ պատրիարքաց։ Իսկ վասն ժամանակի զգենլոյ նորա զայն, գրէ Մանուէլ վարդապետ ի պատմութեան իւրում. «Յամի Տեառն 1789, յերկրորդ ամի պատրիարքութեան նորա եկն ետհաս հաստատութիւն և եմիփորոնն զոր զգեցաւ յաւուր տօնի հոգեգալստեան։ Եւ ի նմին ամի հաստատութեան նորա ձեռնադրեաց զտէր Յովակիմ եպիսկոպոս ի վերայ Մամպռոյ քաղաքին, որ է Մերտին, յաւուր տօնի վերացման սրբոյ խաչին»։

Յամին 1791. սեպտեմբեր 29, ի տօնի սրբոյն Միքայէլի (ըստ լատին ծիսի) եղև համաձայնութիւն ընդ Միքայէլ Աղայի որդւոյ տէր Յովհանի Բաբումեանց, ի պէտս ծախուց վեց պատանեաց հրահանգելեաց ի կոչումն եկեղեցականութեան, այլ և այլ պայմանօք. ամաւ յառաջ եղեալ էին բանակցութիւնք վասն այսր իրի, որպէս յայտ է ի թղթոյ սուրբ ժողովոյն գրեալ ի 1 օգոստոս, 1790. յորում բանք լինին զկանոնաց և զբարեկարգութենէ, զոր սրբազան հայրապետն յօրինեալ և ժողով եպիսկոպոսաց հաստատեալ էր յերկրորդ ամի հայրապետութեան իւրում ի 1789. և առաջարկեալ սուրբ ժողովոյ տարածման հաւատոյ։ Որ ծանոյց զիւրն հաւանութիւն ընդ այնոսիկ սահմանադրութիւնս և կանոնս բարեկարգութեան։

Մինչդեռ այս բանակցութիւնք լինէին ընդ յիշատակելոցն ի վեր, ձեռն արկին ի կառուցանել շինուած մեծ ի հիւսիսակողմն ջրհորոյն, որ յայնժամ ի կիր արկաւ իբր սեղանատուն հասարակաց, ապա զկնի ժամանակաց կարգեցաւ ի մառան և կառուցան ի վերայ այնր տան սենեակք երկուստեք և սրահ ի միջի ունելով, կից այնմ, որ շինեալ էր յաւուրս Միքայէլի Պետրոսի Գ։ Եւ այս ըստ բաղձանաց և ըստ յանձնարարութեան Բարսղի կաթողիկոսի, այլ միաք Գրիգորի էին ի մեծագոյնն ևս ձեռն արկանել շինուած։

Թէպէտ անդատին յօրէ անտի հիմնարկութեան վանաց փոխման Ամենասուրբ կոյս Աստուածածնին իղձ լինէր պատրաստել ընծայարան բաւական ի հրահանգութիւն կոչեցելոցն ի պաշտօն և ծառայութիւն Տեառն Աստուծոյ, և ի խնամս հօտին Քրիստոսի, թէպէտ յաւուրս Միքայէլի և Բարսղի աստուածաբեալ պատրիարքաց եղեալ էր սկզբնաւորութիւն ինչ թերակատար, և ինչ ինչ պատրաստութիւնք առ յառաջացուցանել զայն։ Այլ պահեալ էին Գրիգորի Պետրոսի, և երանաշնորհն հայրապետի փառք՝ ի կատար հասուցանել զայս գործ մեծ և կարևոր. մինչև կարի յիրաւունս անուանէ զսա Ղևոնդ Արքեպիսկոպոս Խոռխոռունի հիմնադիր միաբանութեանս, որ ի Պզոմմառ։

Գրիգոր կաթողիկոս յեպիսկոպոսութեան իւրում շրջեալ յարևելս, ուր բնակին որդիք սրբոյ հօր Լուսաւորչին, ի խնամել զհաւատացեալս ի Քրիստոս, և որ այլն ևս, հաւաքեալ էր ի հայ որերոյ անտի գումար ինչ յանուն դպրոցի։ Յետ ամբառնալոյն յաթոռ հայրապետութեան և կառուցման սենեկաց տաճարի յիշատակելոց, բանակցեալ ընդ սրբոյ Աթոռոյն ժողովեաց մանկունս ուշիմս, այլ կարի սակաւս թուով, յամին 1791, սկիզբն արար նորոյ ընծայարանին։ Ապա ի նմին ամի աւարտէր և բանակցութիւն ընդ մեծի բարերարի դպրոցին ընդ Աղա Միքայէլի Բաբումեանց, և ի հասանել անդ նպաստից մասն առ մասն, ձեռն արկանէր այնուհետև կանգնել շինուած մեծակառոյց ի հարաւակողմն, հանդէպ իւրակերտ շինուածոյն առաջնոյ։ Եւ էին սրահք երկու կամարակապք, ներքնատուն և վերնատուն ի վերայ, քսան սենեկօք, և կրկին ուսումնարանօք, որք և աւարտեցան յամին 1810, ուր և փոխադրեցան աշակերտք, որոց թիւ աճեցաւ ցվեշտասան։ Եւ

ընծայարանն նուիրեցաւ ի պատիւ սուրբ Միքայէլի հրեշտակապետի, յանուն գլխաւոր բարերարին Աղա Միքայէլի Բաբումեանց, որոյ պայմանք կատարին անխափան մինչև ցայսօր։

Գրիգոր կաթողիկոս սահմանեաց և վասն աշակերտաց կարգս և կանոնս, բազմացոյց զքահանայս և առաքեաց ուրանօր պէտք էին, զի չկայր յաւուրս նորա խստութիւն հալածանաց, թէպէտ և ոչ կատարեալ ազատութիւն։ Քաջ ի դէպ գրէ զսմանէ Ղեւոնդ Արքեպիսկոպոս Խոռխոռունի «Փայլեաց ամենայն սրբութեամբ, պայծառացաւ սքանչելագործութեամբ իբրև զմի ոք ի նախնի հարց»։

Ձեռնադրեաց եպիսկոպոս յամին 1805, զՄանուէլ վարդապետ ի վերայ Ատանոյ ի 1806 զՅակոբ վարդապետ Հօլասեան ի վերայ Ամասիոյ, և զՊետրոս վարդապետ Ճերանեան քիլիսցի ի վերայ Մարաշոյ։ Ի 1811, զԳաբրիէլ վարդապետ Խաչատէյտեան Բերիացի ի վերայ Բերիոյ։ Եւ հուսկ ապա ի վերջին ամի հայրապետութեան իւրում, կոչեաց խորհրդով եպիսկոպոսաց զՅովհան վարդապետ Կիրակոսեան եւդոկիացի, և ձեռնադրեաց զնա յանուն Դամասկեայ, որ և էր ջերմեռանդն յոյժ ի պաշտօն սուրբ կոյս Աստուածածնին։

Յաւուրս սորա գնեցաւ կալուած մեծ ի Մազրա, և այլք ի Զմմառ և այլուր, իսկ ի Ղատիր ութթթատանք, ատրև Ղատիրի ի դաշտին Ճիւնէի յամին 1809, երկիր ընդարձակ՝ գնով 1240, ի Եաղուպ Հայքելէ (պարտի լինել մասն ատրին այժմու ռոռգեալ երկրին) յորում յամին 1811, պեղեցաւ ջրհան (վաւրա) ծախուք 2200 դահեկանաց։

Լցեալ լիացեալ այսչափ մեծամեծ արդեամբք, վերացաւ առ անձկալին իւր Քրիստոս, ի խոր ծերութեան յ17, յունիսի 1812, և թաղեցաւ յեկեղեցւոջ վանաց փոխման սուրբ կոյս Աստուածածնին ի Պզոմմառ։

ԳՐԻԳՈՐ ԺԳ. ՊԵՏՐՈՍ Զ.

ՃԵՐԱՆԵԱՆ ՖԻԼԻՍՑԻ

17 Ցուրբ 1812 – 1841

Զաւուրս վեց միայն մնաց Աթոռն պարապեալ և յաւուր եօթներորդի գումարեցան յեկեղեցւոջ վանաց Զմմառի Արքեպիսկոպոսք և եպիսկոպոսք. Մանուէլ Ատանոյ, Պետրոս Գերմանիկոյ. Յակոբ Ամասիայ, Գաբրիէլ Բերիոյ և Յովհան Դամասկեայ ի 23 յունիսի 1812. և ընտրեցին ի պատրիարք զՊետրոս եպիսկոպոս Գերմանիկոյ, և կոչեցաւ Գրիգոր Պետրոս Զ.։ Իսկ Յովակիմ Արքեպիսկոպոս Մարտինոյ ոչ կարացեալ առաջիկայ գտանել վասն վայրացն բացակայութեան՝ թղթով ետ զիւրն հաւանութիւն։

Եւ զի քահանայապետն Պիոս Է. յաքսորս էր յայնժամ, և վասն. կարդինալք ցրուեալք, կայր ի Հռովմ տեղակալ գահերիցու սուրբ ժողովոյն տարածման հաւատոյ Հայր Յովհաննէս – Մկրտիչ Գուարանթոթթի, որ ի հրամանէ և յանուն քահանայապետին ետ զհաստատութիւնն ի 10 մարտի 1813, առաքելական իշխանութեամբ, այլ զհանդէս տուչութեան վերարկուին պահեալ էր անձին Պիոս Է. զոր և յետ յաղթական դարձին ի Հռովմ յԱթոռ իւր՝ կատարեաց մեծահանդէս յ19 սեպտեմբեր 1814։ Քաջ էր սա յուսմունս աստուածաբանութեան, յիրաւաբանութեան և յայլ մակածութիւնս, գիտակ էր հայ, լատին, իտալական, թուրք և արաբ լեզուաց։ Այր

սքանչելի յառաքինութեան և փոյթ ի փրկութիւն հոգւոց. քարոզէր անձամբ ի քահանայութեան, յեպիսկոպոսութեան, և ի հայրապետութեան իսկ իւրում։ Ունէր համբաւ մեծ սրբութեան և գիտութեան առաջի մեծի և փոքու, եկեղեցականաց և աշխարհիկ անձանց, որ ուրուք խնդիր ինչ, կամ տարակոյս, կամ կնճիռն ընդ առաջ ելանէր, դիմէին առ նա վստահութեամբ, առ ի զլուծումն այնր առնուլ. և նա ընդունէր զամենեսին քաղցրութեամբ։ Համարումն նորա մեծ էր և յարգի առ սրբոյ Աթոռոյն։

Զարտաքին գործառնութիւնն, որպէս և զմատակարարութիւն ելից և մտից վարէր փոխանորդն իւր կամ աթոռակալ Յակոբ եպիսկոպոս Հօլասեան. որ հրամանաւ նորին բազմացոյց զկալուածս վանաց յայլ և այլ գիւղօրէս Բէսրուանու իբր հարիւր մասունս երկրի, կիցս միմեանց կամ բաժանեալս, ի գին առաւել քան հազար հինգ հարիւր օսմանեան լիրայից, յորմէ և կալուածն գնեալ 1837–8–9–40. ի Զպտին և Մըշէն, զովողութեամբ ընդ Թաննուս Պիսկէնթէուի. վճարեալն ի վանաց 30310 ½։ Եւ ի Զմմառ ոչ սակաւ կալուածս։

Ի սորա աւուրս կառուցան սեղանատունն մեծ, խոհանոցն և առ նովաւ շինուած ներքնատուն, և ի վերայ այնր սրահ խոնարհ՝ երբեակ սենեկօք և մի պատշգամաւ ցբարձրութիւն խոհանոցին, յորոց և ի կիսոյ մասին խոհանոցին վերայ կառուցան սենեակք երկու մեծք, և ի հանդիպոյ սենեակ մի և կամարակապ գաւիթ։ Շինեցաւ ևս ջրհոր մեծ ի ստորև թթաստանաց ընդ արևելս մեծածախ յոյժ, և առ նովաւ ներքնատուն մեծ և ընդարձակ, և այլ ևս շինութիւնք, այլ ոչ ըստ արուեստի ճարտարապետաց, և ոչ այնպէս ամրակուռ. թէպէտ թանձր որմովք պատեալ։ Ընդ որ ոչ ասենեքին ի միաբանից հաճ և հաւան գտանէին, նա զի և տրտունջք լսելի եղեն։

Հինգ եպիսկոպոսունք ձեռնադրեցան ի Գրիգոր Պետրոս Զ. կաթողիկոսէ, Ստեփանոս վարդապետ Հօլասեան անկիւրացի ի վերայ Ատանոյ։ Աբրահամ վարդապետ Քիւբելեան Անթապցի. և յետ մահու նորա Բարսեղ վարդապետ Այվազեան բերիացի ի վերայ Բերիոյ։ Միքայէլ վարդապետ Տէր Աստուածատրեան բրգնիկցի ի վերայ Կեսարու Գամրաց։ Եւ Յովսէփ վարդապետ Ֆարրայեան բերիացի ի վերայ Մարտինոյ։

Յաւուրս սորա եղև հալածումն մեծ յոյժ, դրդմամբ Կարապետ պատրիարքի և ոմանց ի մեծամեծացն Հայոց, ի 27 դեկտեմբերի 1827, աքսորեցան Տիւզեանք և Թէկրեանք ի Կեսարիա և այլք այլուր. հետզհետէ բազմացան բանդարկութիւնք, շղթայք և տարագրութիւնք ի Կոստանդնուպօլիս և յայլ ևս քաղաքս և տեղիս. ի 14 յունիսի 1828 հասանէ ի վանս Գրիգոր վարդապետ Սարրաֆեան կարնեցի և ընդ նմա ժզ քահանայք կողմանցն Կարնոյ, և ի 15 նոյեմբեր, ժամանեն այլ ևս իդ քահանայք ի Քիւլլիւ գեղջ, ի Խոտորջրոյ, ի Տարոնոյ և այլոց կողմանց, մեծաւ մասամբ ձեռնադրեալք ի Մերտին։ Կացին մնացին ի վանս մինչև ցելս հալածանաց. ոմանք կնքեցին աստէն զկեանս իւրեանց. զի զնասեալ էին յոյժ յահէ հալածանացն և տառապանաց երկայն ճանապարհին։ Խնամ մեծ եցոյց նոցա հայրապետն բարեգութ. որպէս և Եպիսկոպոսք և միաբանք, որով բազմաց յառողջութեան պատապարեալ դարձան ի հայրենիս և ի տեղիս իւրեանց։ Ի պատճառս մեծամեծ ծախուց, զոր յայն սակս առնել հարկ եղև, և վասն ի վերայ հասեալ արշաւանի Եգիպտացւոցն յԱսորիս՝ փակել ստիպեցան զընծայարանն զամս ինչ. և սակաւք յոյժ գային այնուհետև յաշակերտութիւն ի վանս, այնպէս զի յամին 1835, վեց միայն գտանէին պատանիք ի դպրոցի աստ։

Յամին 1830, յամսեանն յունուարի հրովարտակաւ մեծի Սրքային սուլդան Մահմուտայ, դադար առնոյր հալածումն կաթողիկեայ Հայոց, և դարձան աքսորեալքն առ հասարակ յիւրաքանչիւր բնակութիւնս իւրեանց, և ծանուցան կաթողիկեայք հասարակութիւն ուրոյն։

Ի հաստատել խաղաղութեան և անդորրութեան կաթողիկեայց յամենայն տեղիս լայնածաւալ պետութեանց, արքեպիսկոպոսն Բերիոյ, հաստատեաց այնուհետև զբնակութիւն իւր ի վիճակի իւրում. վաղիսկ արքեպիսկոպոսն Մարտինոյ բնակէր յիւրումն։ Յ. 3 մարտի 1831 Միքայէլ արքեպիսկոպոս Կեսարիոյ առաքի ի Սեբաստիա, Եւդոկիա, Բրգնիկ և Կիւրին, իբր կաթողիկոսական փոխանորդ կողմանցն, որ համարէրն առանձինն թէմ պատրիարքին։ Եւ ինային ի վանս միայն Յակոբ եպիսկոպոս Սմասիոյ Սթոռակալ, և եղբայր նորա Ստեփանոս եպիսկոպոսն Ստանոյ։

Զկնի հրատարակութեան կաթողիկէ հասարակութեան, համարէր ինն այնպէս, եթէ իրաւասութիւն պատրիարքին Կիլիկիոյ ծաւալեսցի առ ամենեսին, իբր զի բարձեալ էր պատճառ ամփոփման իշխանութեան նորին, այլ առ ժամն այլազգ իրքն տնօրինեցան, և քահանայապետն Պիոս Ը. ի դէպ դատեցաւ կանգնել ի 6 յուլիսի 1830, զՍթոռ գահերէց Սրքեպիսկոպոսութեան Կոստանդնուպօլսի, որոյ իրաւասութիւն տարածէր ի կողմանս մինչ փոքուն Սսիոյ և Հայոց մեծաց, այլ առանց վնասելոյ իւիք իշխանութեան պատրիարքին Կիլիկիոյ յամենայն տեղիս, որք զայնմ Սթոռոյ կախեալ էին։ Առաջին նախագահ եղև Անտոն Նուրիճանեան որ զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան ընկալաւ ի կարդինալ Ծուռլայէ ի 11 յուլիսի. այլ զի սա հպատակէր Սւստրիական

պետութեան, ոչ եղև ընդունելի յաչս Բարձրագոյն Դրան. ուստի և անուանեցաւ պատրիարք արքունի կամ ազգապետ՝ Յակոբ վարդապետ Մանուէլեան յամսեանն մայիսի 1831, որ հոգ տանէր միայն ժամանակեայ իրաց. առանց խառնելոյ յԵկեղեցական ևս ի հոգևորս. զամս երկուս և զամիսս ութ վարեալ սորա զայն իշխանութիւն, հանգեաւ ի տէր։

Յաջորդ եղև նմա յարութիւն վարդապետ Զուխաճեան ի միաբանութենէ Վիէննայի յ 2 փետրուար 1734, այլ ոչ յերկարակեաց լեալ վախճանի։

Եւ ընդ նորա կայ ի նոյն պաշտօն Ազգապետութեան Հայր Գրիգոր վարդապետ Էնքսէրճեան ի նոյն ուխտէ Վիենացւոց ի 15 ապրիլ 1835, և այլք հետզհետէ ոչ սակաւ ժամանակս։

Այլ որպէս ասացաւ, հոգևորականն իշխանութիւն ոչ սոցա, այլ նախագահ Արքեպիսկոպոսին պատկանէր, զոր վարեաց Անտոն Արքեպիսկոպոս Նուրիճանեան ցմահ իւր։ Եւ յաջորդեաց զնա յամին 1838. Պօղոս Մարուշեան՝ որ անուանեալն էր Արքեպիսկոպոս Փաղկիդեայ, և օգնական ձեռնադրիչ եպիսկոպոսին անդստին 1832 ամէ։ Սմա յամին 1846, յաջորդեաց Անտոն Հասունեան Արքեպիսկոպոս Անարզաբայ, որ յետ ժամանակաց ամբարձաւ յԱթոռ կաթողիկոսութեան։

Բաժանումն այս կաթողիկեայ Հայոց չէր ի հաճոյս խոհական հայրապետին, այլ այնու՝ զի բարձաւ հալածումն, և ազատութիւն շնորհեցաւ կաթողիկէ պաշտաման, միխիթարէր վեհ ոգի նորա, և անդորը սրտիւ փոյթ ի մէջ առնոյր ի յառաջադիմութիւն և ի բարեկարգութիւն հօտին իւրոյ, ջանալով հեռացուցանել զիւրան ի շփոթից որք յուզէին ի մայրաքաղաքի անդ։

Այլ ի բնի անդ իւրում ծագեցաւ խնդիր ինն վասն

կամաւոր ասացեալ աղքատութեան յուխտի անդ Միաբանից, և զի նախորդ իւր զկանոնն վասն միաբանիցն առաջի արկեալ էր սրբոյ Աթոռոյն, այս իսկ խնդիր արկաւ ընդ նովին ատենիւ, և իշխանութեամբ նորին վախճան եղև խնդրոյն. և զկնի փոխման յաստեացս Գրիգորի՝ եհաս յամին 1843 վերջնական ձևն ուխտի միաբանից, որպէս տեսցի։

Հարուած մեծ եղև գթառատ սրտի երանաշնորհ հայրապետին, վերջին յարձակումն Իպրահիմ փաշայի Եգիպտացւոյ ի Քեսրուան, ուստի և նուիրեաց զանձն իսկ իւր ինքնայօժար վասն հաւատացելոց ի Քրիստոս և ննջեաց ի տէր զքուն արդարոց, ի հոտ սրբութեան ի 22 սեպտեմբեր 1840. և Աստուած փառաւորեաց զհաւատարիմ ծառայ իւր այլ և այլ հրաշիւք, յառաջ և զկնի մահուն, զոր անմոռաց յիշատակեն ցայսօր ժամանակի բնակիչք բազմաց ի գիւղօրէից որք շուրջ զվանօքս կան։ Թաղեցաւ մարմին նորա յեկեղեցւոջ վանաց փոխման կուսին ի Պզոմմառ, և յետ երկուց ամաց և աւելի, գտաւ մարմին նորա անապական, ի դամբարանի անդ, ըստ վկայութեան ականատեսից, յորոց են որ և ի գիր իսկ արձանագրեալ են զայս դիպուած։



ՅԱԿՈԲ Ե. ՊԵՏՐՈՍ Է.

ՀՕԼԱՍԵԱՆ ԱՆԿԻՒՐԱՑԻ

8 Ցուլիս 1841 – 1843

Յաւուր յորում կնքեաց զկեանս իւր Գրիգոր Պետրոս Զ. գումարեաց Ս.Թոռակալ նորին Յակոբ Ս.Քեպիսկոպոս Ս.մասիոյ, զմիաբանսն որ ի վանս, Ստեփանոս Հօլասեան Ս.Քեպիսկոպոս Ս.տանոյ և զինն քահանայս, գումարեաց ի ժողով որք և աբարին ընտրութիւն փոխանորդի պարապեալ Ս.Թոռոյն յանձն նորին Յակոբայ Ս.Քեպիսկոպոսի։

Զամիսս ինն և զաւուրս ութ տևեաց պարապութիւնն, և յ 30 յունիսի, 1841. ժողովեցան յեկեղեցւոջ վանաց նուիրեալ փոխման սուրբ կուսին արքեպիսկոպոսք և եպիսկոպոսք Յակոբ Ս.մասիայ, Ստեփանոս Ս.տանոյ, Բարսեղ Բերիայ և Յովսէփ Մարտինոյ, և ընտրեցին պատրիարք Կիլիկիոյ զՅակոբ Ս.Քեպիսկոպոս, որ կոչեցաւ. Յակոբ Պետրոս Է. Միքայէլ Ս.Քեպիսկոպոս Կեսարիոյ, որ իբր ի տան ամաց հետէ կայր ի կողմանս Սեբաստիոյ. զերկարութիւն ճանապարհին ի մէջ բերեալ՝ չէր ի ժողովն առաջիկայ, ասի իսկ զի գիտակ էր մտաց եպիսկոպոսացն, որք զինքն եղեալ էին ի մտի ամբառնալ յայն պաշտօն, վասն որոյ և թղթով առաքեաց զիւրն հաւանութիւն ընդ ընտրութիւն Ս.Քեպիսկոպոսին Ս.մասիոյ և զանձնէ իւրմէ որոշակի յայտնեալ էր զիւր միտս։

Հաստատութիւնն որպէս և վերարկուն տուաւ նմա ի 27 յունուարի 1842 ըստ սովորութեանն՝ որ բազում անգամ ի գործ եղեալ յաւուրս նախորդաց իւրոց. այն է, ձեռամբ առանձինն փոխանորդի, որում յանձն արար զայն Գրիգոր Ժ.Զ. քահանայապետ։ Ց 3 ապրիլի նոյն ամի զգեցաւ Յակոբ կաթողիկոս զվերարկուն մեծաւ հանդիսիւ։

Յետ այնորիկ ձեռնադրեաց եպիսկոպոսունս երկուս. զԻգնատիոս վարդապետ Փալըպճեան ի վերայ Ամասիոյ և զՊետրոս վարդապետ Աբելեան ի վերայ Գերմանիկոյ։

Սա ևս ունէր փոյթ մեծ ի բարգաւաճումն միաբանութեանս, ամին իրի ջանացաւ ի ձեռս բերել զվերջնական ձև ուխտին, որ և եհաս ի Հռոմէ ի սկիզբն 1843 ամին, որ վասն աշակերտեալ մանկանց ի վանս Զմմառի, որով միխիթարեցաւ սիրտ նորա։

Ի փոխանորդութեան իւրում առ նախորդովքն բազումս վաստակեալ, յօգուտ և ի պայծառութիւն վանաց և միաբանութեան, որում անձնանուէրն էր, մանաւանդ ի բազմացուցանել զկալուածսն, սակայն ի պատրիարքութեան իւրում, որ տևեաց ամ մի, ամիսս եօթն և աւուրս վեց, չկարաց առաւել ինչ գործել. նա զի և զմեծ ինն մասն այնր ժամանակի անցոյց տառապագին հիւանդութեամբ, որում տարաւ ամենայն համբերութեամբ, և յանձնարարութեամբ կամացն Աստուծոյ. ապաւինեալ ի մայրական գութ Սուրբ Աստուածածնին, և հանգեաւ ի տէր ի խորին ծերութեան ի 6 փետրուար, 1843։ Թաղեցաւ յեկեղեցւոջ վանաց փոխման կուսին ի Պզոմմառ։

ԳՐԻԳՈՐ ԺԴ. ՊԵՏՐՈՍ Ը.

ՏԷՐԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ ԲՐԳՆԻՔՑԻ

25 Յունիս 1843 – 1866

Հռչակեալ էր անուն սորին անդստին յաւուրց անտի եպիսկոպոսութեան իւրոյ. որ եղև ի 14 մայիսի 1826, և զամս իբր հինգ վարեալ զվերատեսչութիւն ընծայարանին ի Պզոմմառ, ապա ի 4 մարտի 1831, առաքեցաւ ի կողմանս Սեբաստիոյ, պաշտամամբ կաթողիկոսական փոխանորդութեան, և պայծառացոյց զհօտ իւր. և յաւուրս առաջնորդութեան իւրոյ կառուցան եկեղեցիք Բրգնկոյ, Եւդոկիոյ և Կիւրնոյ, և արար ոչ սակաւ բարեկարգութիւնս յայնոսիկ տեղիս։

Կամք էին Եպիսկոպոսաց գումարելոց ի վանս յ30 յունիսի 1841, զսա ինքն ընտրել պատրիարք, այլ նա յայտնի իսկ ծանուցեալ էր հարց ժողովոյն, եթէ ոչ յանձն առնուցու զայն։ Սմին իրի իբրև յետ մահու Յակոբայ Պետրոսի Է. միւսանգամ գումարեցան ի նոյն վանս ի Պզոմմառ, գրեցին առ նա միանգամ և երկիցս, և ի հուսկն դիմեցին ի Հռովմ յորդոր կարդալ նմին, զի յանձն առնուցու գալ և չկալ հակառակ միաձայն որոշողութեան ժողովեալ հարց, և այսպէս գայր հասանէր։ Եւ յետ աւուրց գալստեան նորա գումարեցան յեկեղեցւոջ նոյն վանաց Արքեպիսկոպոսք և եպիսկոպոսք՝ Ստեփանոս Ատանայ որ և էր տեղապահ ընտրեալ ըստ օրինակի նախորդին

իւրոյ ի Միաբանից վանաց, Միքայէլ Կեսարիոյ, Իգնատիոս Ամասիոյ և Պետրոս Գերմանիկոյ և ընտրեցին պատրիարք զՄիքայէլ Տէրասուածատրեան Արքեպիսկոպոս Կեսարիոյ որ կոչեցաւ Գրիգոր Պետրոս Ը։ Բարեղ Բերիոյ և Յովսէփ Մարտինոյ թղթով տուեալ էին զիւրեանց հաւանութիւն։ Իսկ ժամանակ պարապութեան եղեալ էին ամիսք հինգք և աւուրք հինգք։

Գրիգոր ԺԶ. քահանայապետ ի կոնդակի հաստատութեան նորին ի 25 յունուարի 1844. խօսի բազում գովութիւնս, թէ չկամէր յանձն առնուլ զպատրիարքութիւն խոյս տուեալ ի փառաց և ի պատուոյ և ի թախանձանաց եպիսկոպոսաց որոց աջակցեցան Բերիոյն և Մարտինոյն թղթովք, որք չէին լեալ ձեռնահաս ի ժողովն ժամանել ստիպեալ տեղի ետ կամաց նոցին և յետ այլոց բանից յարէ. «Այնպէս զի իրաւամբ մարթէ ակն ունել. եթէ ամբառնալ նորա (յայս աստիճան) օգտակար յոյժ լինիցի բովանդակ ազգին Հայոց»։ Վերարկուն տուաւ ըստ սովորութեան ի ձեռն փոխանորդի առ այն կարգելոյ ի պատրիարքէն, զոր շքեղ հանդիսիւ զգեցաւ յ 17 մարտի 1844։

Զամս երիս մեծաւ ջանիւ փոյթ տարեալ ի բարեկարգութիւն պատրիարքական վիճակին, և ի զարգացումն վանաց և Միաբանութեան, ապա յ12 մարտի 1847 Մեկնեցաւ ի վանաց գնալ ի Հռովմ, ուր մնաց ամ մի, ամիսս երկուս և աւուրս ինչ։ Եւ հարկեցաւ դառնալ յետս չև աւարտեալ զամենայն զգործս իւր և զխնդիր. ի պատճառս յուզմանց յիտալացւոց աշխարհին և ժամանեաց ի Բերիտոս ի 5 յունիսի, 1848.

Ի կարգի եղեալ զշփոթս ինչ, որ յուզէր ի Տիարպէքր խաղաղացոյց զայն։ Որոշեաց բանալ դպրոց

օժանդակ ընծայարանի վանաց յԵւդոկիա, գնեցաւ տուն մեծ անդէն ընդարձակ պարտիզօք. և ի 16 սեպտեմբեր մեկնեցան ի վանաց Աբրահամ վարդապետ Գարատելեան վերատեսուչ նորոյ դպրոցին, որ նուիրեցաւ ի պատիւ Անարատ յղութեան սուրբ Աստուածածնին, և վեց աշակերտք որոց թիւ, ի հասանել նոցա յԵւդոկիա, բազմացաւ հետզհետէ մինչև ցերկոտասան, ի սկզբան անդ ծաղկեցաւ յոյժ ցորվայը կենդանին էր Աբրահամ վարդապետ, այլ ապա ի կամելն բարգաւաճագոյն ևս գործել, խապտռ խափանեցաւ. և ոչ սակաւ տուժից եղև պատճառ միաբանութեանն, և կայ փակեալ ի բազմաց հետէ։

Զեռն արկ այնուհետև հայրապետն իմաստուն դնել եպիսկոպոսունս ի կարևոր տեղիս վիճակին իւրոյ, և ձեռնադրեաց նախ զՊօղոս վարդապետ Աքթէրեան կարնեցի ի վերայ Աղեքսանդրիոյ Եգիպտոսի, և զի սկիզբն լինէր դարձի յԱտանա յամին 1849. առ ժամն առաքեաց զնա անդր, առ սրտապնդել ևս ըզնորեկսն։

Ի յաջորդ 1850 ամի ձեռնադրեաց Եպիսկոպոս զՅակոբ վարդապետ Պահտիարեան ի վերայ Սմիւռնայ, և զՅովհաննէս վարդապետ Հաճեան յանուն Կեսարիոյ Կապադովկացւոց։

Գումարեաց ժողով պատրիարքական յոր կոչեցան բաց յեպիսկոպոսաց, նաև փոխանորդք միաբան քահանայից գաւառաց գաւառաց։ Բազում ինչ կարգաւորեցան յայս ժողով, որ և առաջարկեցաւ սրբոյ Աթոռոյն, առ ընդունել զհաւանութիւն նորին։ Յաւելին ապա թուղթ սինհոդոսական գրեալ ի 15 նոյեմբերի, յորում խօսին զժամերգութենէ, զտօնից, զպահոց, զինամութենէ և զհոգևոր ազգականութենէ, և զՅումար, զորոց խօսին բազում հմտութեամբ և փորձառութեամբ պիտոյից հաւատացելոց։

Յառաջ քան զայս ժողով պատրաստեալ էր կարգս և կանոնս վասն վանաց և միաբանութեան և վասն ինայուն ժողովոյ ի վանս, զոր և խնդրեալ էին ոմանք յեպիսկոպոսաց և փոխանորդք միաբան քահանայից գաւառաց գաւառաց, որք և գործադրեցան իսկ ի կենդանութեան իւրում։

Ամք քսան (1829–1848) անցեալ էին ի դադարելոյ անտի հալածանացն, և տակաւ կերպաւորէին իրք կաթողիկեայց և պատրիարքութեան Կիլիկիոյ խնամով հոգեշնորհ հայրապետաց. կանգնեցան հընգետասան նոր եկեղեցիք, և մատրունք ոչ սակաւք, և ի բազում տեղիս բնակարանք վասն եկեղեցականաց, և ահա սկիզբն լինէր նորոց առաքելութեանց, յորոց ոմանք յօրինեցան թէմ եպիսկոպոսական. որպիսիք են Ատանա, որոյ սկիզբն եղև յամին 1849, Մարաշ 1857, Մելիտինէ 1859, իսկ այլ առաքելութիւնք են Փեսապ 1854, Դարա 1856, Պիրէճիկ 1857, Անթապ 1858, Եդեսիա 1862, Կեսարիա 1862, և այլ բազում տեղիք, յորոց ի գլխաւորսն կարգեցան Աթոռք եպիսկոպոսականք։

Բաց ի յիշատակելոցդ ի վեր անդր, ձեռնադրեաց Գրիգոր Պետրոս Ը. այլ ևս եպիսկոպոսունս ինն. որոց անուանք են, Գաբրիէլ վարդապետ Շաղատեան Բերիացի ի վերայ Մարտինոյ, Միքայէլ վարդապետ Աղեքսանդրեան Կիւրինցի ի վերայ Երուսաղէմի. Ներսէս վարդապետ Հալէպլեան Եւդոկիացի ի վերայ Սեբաստիոյ, Արսէն վարդապետ Աւագ Վարդան Անճարակեան ի վերայ Եւդոկիոյ, յԱնտոնեան կրօնաւորաց, Գրիգորիոս վարդապետ Պալիթեան Բերիացի ի վերայ Բերիոյ, Ղևոնդ վարդապետ Խոռխոռունի ի վերայ Մելիտինոյ, Մելքոն վարդապետ Նազարեան ի վերայ Մարտինոյ, Սուքիաս վարդապետ Գազանճեան Կոստանդնուպօլսեցի Աբրահայր Անտոնեան

ուխտի յանուն Անտիոքայ, Բարսեղ վարդապետ Գասպարեան Բերիացի յանուն Կիպրոսի։ Եւ եղև թիւ հին և նոր թեմից ի պատրիարքութեան Կիլիկիոյ, որ կացին ՃԾացին յարատև, տասն՝ Եգիպտոս, Բերիա, Մարտին, Տիգրանակերտ, Սեբաստիա, Եւդոկիա, Մելիտինէ, Մարաշ, Ատանա, Կեսարիա։

Վասն նորանոր առաքելութեանց և վասն նորակազմ թեմից կրել կրեաց բազում նեղութիւնս, այլ Տէր օժանդակ եկաց բարի դիտման նորա և ուղղութեան սրտի, և անընկճելի արիութեամբ տարաւ ամենայն վշտաց և դժուարութեանց որք ընդ առաջ եղեն նմա։ Քաջալերը մեծ եղեն նմա գրութիւնք մեծին Պիոս Թ. քահանայապետի, որովք յայտնէր զհայրական սէր և զինդակցութիւն, և խրախուսէր զնա ի գործն առաքելական, և աստուածահաճոյ, որով և իւր իսկ սիրտ միխիթարեալ էր յոյժ։

Եւ զի ի վերջին ամս հայրապետութեան սորա բանք եղեն ի միութիւն երկուց ազգային եկեղեցական իրաւասութեանց, արար ժողով ընդ չորից եպիսկոպոսաց, որք յայնժամ ի վանս գտանէին, յ 8 փետրուար 1865, իբրև հայր խնամոտ հոգ տարաւ նաև միաբանութեանս, և յորոշման անդ զոր կալան, էր և գլուխ մի այսպիսի, Ը. «Զի Միաբանութիւն կաթողիկոսարանին (յետ փոխադրութեան Աթոռոյն ի Կոստանդնուպօլիս ըստ Բ. գլխոյ) կայցէ ՃԾացէ հանապազ իւրովք կանոնովք կարգաւորութեամբ և առանձին գլխով»։

Եւ ընդ որոշողութեամբքս եղին զձեռագիր իւրեանց ինքն հայրապետն և չորեքին առաջիկայ եպիսկոպոսքն և ապա եօթն բացակայք։ Եղեն և այլ ևս օգտակար որոշմունք ի նպաստ Միաբանութեան յայսմ ժողովի ամենեցուն հաւանութեամբ։

Ցաւուրս սորին Գրիգորի կառուցան գործակալու-

թեամբ Պետրոս և Յովհաննէս եպիսկոպոսաց եռեսուն կրպակք ի ճիւնէյ յափն ծովուն. դրամովք միաբանից ոմանց և վաճառմամբ հին կալուածոց ինչ և գնով աւելորդ սպասուց։ Գնեցան և շինեցան կալուածք յանուն Միաբանութեան յԱտանա, ի Մերսին և յԵւդոկիա։

Նոյնպէս և յառաքելութիւնս թեմս եպիսկոպոսաց և յաւէտ ի նորահաստատս՝ եկեղեցիք, առաջնորդարանք, դպրոցք և բնակարանք։

Յօրինեաց և հաւաքեաց զօգտաշատ մատեանս և թարգմանեաց գրեանս պիտանիս ի լատին և յիտալական լեզուաց, յառաջ և զկնի պատրիարքութեան իւրոյ։

Սա նախ ընկալաւ յարքունուստ հրովարտակ իշխանութեան, և պատուեցաւ արքունական ականակուռ շքանշանաւ պատուոյ (իֆթիխարի) և ապա Մէճիտէիւ Առաջին կարգի։

Մեծ էր հմտութիւն նորա ի նուիրականն առհասարակ. փայլէր ի սրբութեան իբրև զմի ի նախնի հարց, և խոնարհութեամբն ի մեծութեան անդ՝ օրինակ բարի հանդիսանայր ամենեցուն։ Եւ ննջեաց ի տէր յ 8 յունուարի 1866 ի հոտ սրբութեան. և թաղեցաւ յեկեղեցւոջ վանաց փոխման Ամենասուրբ կոյս Աստուածածնին ի Պզոմմատ, կալեալ զԱթոռն զամս ԻԲ, ամիսս Զ։

ԱՆՏՈՆ ՊԵՏՐՈՍ Թ.

ՀԱՍՈՒՆԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԵՑԻ

2 Սեպտ. 1866 – 1886

Զկնի փոխման յաստեացս Գրիգորի Պետրոսի Ը. ծագեցաւ շփոթութիւն իմն ի Միաբանս Զմմառի. ե-րեք հինաւուրցք ըստ կարգադրութեան՝ որ ի գոր-ծածութեան էին ի հնգետասան ամաց հետէ, կա-մէին, զի ինքեանք միայն ընդ եպիսկոպոսին, որ Ա-թոռականն էր հանգուցելոյն, ընտրեսցեն զտեղապահ պարապեալ Ա.թոռոյն, հաստատեալ ի միջի իւրեանց անուանել զնա ինքն զԱ.թոռականն։ Իսկ եպիսկո-պոսն պնդէր, թէ այդ նորութիւն իմն է, ինքն տե-սեալ էր յերկուս դէպս յետ վախճանի Գրիգորի Պետ-րոսի Զ. և Յակոբայ Պետրոսի Լ. զի համօրէն Միա-բանք գումարէին յընտրութիւն տեղապահի, և ստի-պեաց զի այնպէս լինիցի և յայս նուագ։ Իսկ հինա-ւուրցք՝ թէպէտ և կասկածէին ծագել անդէպ ինչ ի-ւրաց, զոր և յայտ արարին նմին որոշ բանիւք, այլ և այնպէս համաձայն գտան նմին առ ի չգայրա-ցուցանելոյ զնա։ Նորա հրամանաւ կոչեցան բոլոր Միաբանք թուով իբրև չորեքտասան և գաղտնի քուէիւք ընտրեցաւ մի ի վարդապետաց, ընդ որ դը-ժուարեցաւ եպիսկոպոսն, և փոխանակ անձին մեղ դնելոյ, խօսեցաւ և գրեաց զերիցն յիշատակելոց, որ ինչ անկաւ ի միտս նորա։ Եպիսկոպոսն և ընտ-րեալ փոխանորդն գրեցին ի Հռովմ, որ խոհականա-

գոյն կալեալ ճանապարհ, կարգեաց զԱրքեպիսկոպոսն Մարտինոյ տեղապահ. և այսպէս վերջ լինէր խնդրոյն։

Յետ բազում բանակցութեանց՝ ի 14, սեպտեմբեր. 1846, զկնի ութից ամսոց և վեց աւուրց պարապութեան, եկին գումարեցան յեկեղեցւոջ վանաց Զըմմառի արքեպիսկոպոսք և եպիսկոպոսք՝ Իգնատիոս Ամասիայ, Պետրոս Գերմանիկոյ, Յակոբ Տիգրանակերտի, Յովհաննէս Կեսարիայ, Գրիգորիոս Բերիայ, Ղևոնդ Մելիտինեայ, Մելքոն Մարտինոյ և Բարսեղ Կիպրոսի. յառաջիկայ գտաւ յայս ժողով և պատրիարքն Երուսաղէմի յանուն սուրբ Աթոռոյն Հռովմայ։ Եւ ընտրեցաւ գահերէց Մետրապոլիտն Կոստանդնուպօլսի Անտոն Արքեպիսկոս Հասունեան և անուանեցաւ Անտոն Պետրոս Թ։

Որպէս յուշ արարի ի վերնագոյնն, յեռեսուն և հինգ ամաց հետէ հաստատեալ էր Աթոռ նախագահ Արքեպիսկոպոսութեան ի Կոստանդնուպօլիս, յոր նստան մի զմիոյ կնի Անտոն Նուրիճեան և Պօղոս Մարուշեան։ Ի հրամանէ սորա յամին 1842. Անտոն Վ. Հասունեան առաքեալ ի Հռովմ, ձեռնադրի անդ յ7 յունիսի արքեպիսկոպոս Անարզաբայ և կարգի օգնիչ նախագահին իրաւամբ ապագայ յաջորդութեան։ Յետ միոյ ամի ի 23 յունիսի 1843. հիւանարկէ զմիաբանութիւն կուսանաց Անարատ յղութեան։ Ի 25 մարտի 1845. ընտրի Ազգապետ, ի 6 օգոստոս. 1846 լինի նախագահ Կոստանդնուպօլսի. և յետ երկուց ամաց թողու զազգապետութիւն։ Ց 30 ապրիլ. 1850, ընտրէ զեպիսկոպոսունս նորակարգ Աթոռոյն Կարնոյ. Անկիւրիոյ, Պրուսայ, Տրապիզոնի, Արթվինոյ և Սվահանու. յորս յաւել յամին 1865. զԱթոռն Խարբերդի։ Պատուեցաւ և յարքունուստ յամին 1856 հրովարտակաւ իբրև եպիսկո-

պոսապետ Կոստանդնուպոլսի։ Այլ և այնպէս տևէր և Ազգապետութիւն ցվախճան կենաց հայր Նիկողայոս վարդապետի Կակոնեան ի կրօնաւորաց Անտոնեան ուխտի և անդրագոյն ևս, յառաւելութիւն ծախուց։

Յաւուրց անտի կարգման նախագահական Աթոռոյն, մինչև ցընտրութիւն վերջնոյ նախագահին ի պատրիարք Կիլիկիոյ, յար ի յուզման կային իրքն ի մայրաքաղաքի անդ, մերթ սակս այս և մերթ սակս այնր պատճառի. երբեմն նուազ, երբեմն առաւել։

Ցասն ամիսք անցեալ էին յընտրութենէ Անտոնի Պետրոսի, յորժամ 13 յուլիսի տուաւ նմա հաստատութիւն և վերարկուն զոր զգեցոյց Պիոս Թ. քահանայապետ ի Հռովմ, ուր գտանէին գրեա թէ ամենայն եպիսկոպոսունք պատրիարգութեան։ Նոքօք հանդերձ հասեալ ի Կոստանդնուպոլիս կատարեցաւ անդ հանդէս գահակալութեան ի տօնի փոխման կուսին ի Նորաշէն եկեղեցւոջ Նուիրելոյ ի պատիւ սուրբ Աստուածածնին։ Նաև վեհափառ ինքնակալն ետ նմա զհրովարտակն պատրիարքական-կաթողիկոսական իշխանութեան։ Առ ի գիտել եթէ զիա՞րդ միութիւնս այս եղև, շատ լիցի ի մէջ բերել զհատուած ինչ ևեթ զկոնդակի հաստատութեան և է «Առաքելական ճոխութեամբ, որ տուեալ է մեզ յընդհանուր եկեղեցի, պատճենիւ կոնդակիս այսորիկ ջնջեմք եղծանեմք զնախագահական և զարքեպիսկոպոսականն յորջորջումն որով... Պիոս (Ը.) նախորդն մեր իւրով Առաքելական թղթով զեկեղեցի Հայոց Կոստանդնուպոլսի զարդարեաց։ Այս և նովին իշխանութեամբ զեկեղեցական Կոստանդնուպոլսի գաւառ Հայոց ի մշտընջենաւորս յարեմք ի պատրիարքութիւն Կիլիկիայ, պատուէր տուեալ զի պատրիարքն նոր և յաջորդք

նորա վարեցին յորջորջմամբ պատրիարքաց Կիլի-
կիայ Հայոց, և զի բնակութիւն նորա լիցի ի Կոս-
տանդնուպոլիս քաղաքի. և զեկեղեցի Կոստանդնու-
պոլսի կարգաւոր իրաւաբանութեամբ վարեսցեն։
Կամիմք իսկ զի ի վերոյ գրեալ պատրիարքութիւն
ամփոփեսցի ընդ սահմանօք. զոր այժմ Կիլիկիայ
պատրիարքութիւն և Կոստանդնուպոլսի նախագահու-
թիւնն ունին »։

Մինչդեռ տակաւին ի Հռովմ էին կաթողիկոսն և
եպիսկոպոսունք, արարին բանակցութիւնս վասն կա-
րևոր իրաց պատրիարքութեան, յորում բանք եղեալ
էին և վասն Միաբանութեան վանաց փոխման Ա-
մենասուրբ կուսին, որ ի Զմմառ, ոչ նպաստաւորք
նմին, ընդդէմ որոց բողոքեցին ոմանք ի միաբանից
առ սուրբ գահն. ի պատասխանեացն, զոր սուրբ ժո-
ղովն ետ առ այն յօդուածս բանակցութեանց, յայտ-
նի տեսանի, եթէ չեղեն նմա հաճոյ այն որոշմունք
ժողովոյ եպիսկոպոսաց ի Հռովմ։

Յետ դարձին ի Հռովմէ առաքեցաւ ի վանս ի 27
սեպտեմբեր 1857 Բարսեղ եպիսկոպոս Գասպարեան
և սկիզբն եղև պատրաստութեան սինհոդոսին. կար-
գեցան կրկին յանձնաժողովք, որք վաստակէին ի
կարգաւորութիւն և ի հաւաքումն նիւթոց։

Եւ զի հարկէր այց առնել վանաց փոխման կու-
սին ի 22 օգոստոս. 1868. մեկնեալ ի Կոստանդնու-
պոլսէ գերերջանիկ հայրապետն ընկերակցութեամբ
երկուց քարտուղարաց և միոյ սպասաւորի. ընդ ճա-
նարհ Աղեքսանդրիոյ և Վերիտոնի եհաս ի 5 – 17
սեպտեմբեր. եմուտ ի վանս մեծահանդէս շքով ի
Ձիւնիէ սկսեալ։ Ի 14, 26 սեպտեմբեր, ժողովեալ
զմիաբանս գտեալս ի վանս, խօսեցաւ բանս յորդո-
ր բանաց, և վստահ արար զամենեսին եթէ Միաբա-
նութիւն կայր ի կայի, որոյ կեդրոն էր վանքն Զմ-
մառի. և թէ պիտոյ էր դնել անդ մեծաւոր ևն.

Ի 15, 28 սեպտեմբեր, մեկնեցաւ ի վանաց, իւրովքն ընկերացաւ նաև Գասպարեան եպիսկոպոսն, և հանդիպեալ ի Պէյթիաշպո, ուր եկաց զաւուրս երիս. և ընդ Վերիտոն և ընդ Յոպպէ հետևորդօքն եկաս յԵրուսաղէմ, զաւուրս վեշտասան մնացին անդ և իդարձին ինն օր կացեալ ի Դամասկոս ի 6 Նոյեմբեր նոր տոմար ժամանեցին ի Զմմառ ուր գերապատիւ Յովսէփ վարդապետ Ֆէրաճեան կարգեցաւ փոխանորդ ի 20 դեկտեմբեր. 1868, և մնացեալ անդ ցկէս յունուարի 1869 և ապա իջեալ ի Վերիտոն, չոգաւ յետ աւուրց ընդ Աղեքսանդրիա յԵգիպտոս, և ոչ շատ երկարեալ անդէն յ17/5 փետրուար. ժամանեաց ի Կոստանդնուպոլիս,

Ի բանալ դրանց գարնայնոյն ժամանէին եպիսկոպոսունք կողմանց կողմանց ի Կոստանդնուպոլիս, ևս ընդհանուր Աբրայք Մխիթարեանց Վենետկոյ և Վիէննայ. և սկիզբն եղև ժողովոյն ի 5 յուլիսի։ Եւ չև աւարտեալ այնր. հարկեցան անկատար թողեալ զայն դիմել ի Հռովմ ի Տիեզերական ժողովն Վատիկանեան որոյ հանդիսական բացումն եղև յ 8 դեկտեմբեր, 1869 և տևեաց ցսկիզբն յուլիսի, 1870. և վասն քաղաքական շփոթից դադար տուաւ այնմ, յետ երից հանդիսական նստից։ Եւ ապա հրամանաւ սրբազան քահանայապետին դարձան իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց հարք ժողովոյն, որպէս և հայրապետն մեր և եպիսկոպոսունք և որք ընդ նոսա յամսեանն օգոստոսի։

Յամին 1869, օգոստոս 4. գերերջանիկ հայրապետն առանձինն կոնդակաւ զահերէց կարգեալ զԻգնատիոս Աբքեպիսկոպոս Սմասիոյ, հրաման ետ նմա կոչել յանուն իւր զեպիսկոպոսունս Կիլիկիոյ և առնել ծրագիր վասն միաբանութեան Զմմառի. վեցիցս ժողովեցան յ 9 օգոստոս, յ 10 սեպտեմբեր ի միա-

սին ինն եպիսկոպոսունք, և յառաջնումն նաև Միաբանք գտեալք ի Կոստանդնուպոլիս. և եղեն որոշմունք կարևորք, այլ ի ծագել շփոթից յազգին վասն այլոց իրաց և յաճապարելն գնալ ի Հռովմ, ոչ մատուցաւ յայնժամ ի գործ։

Յետ դարձին ի Հռովմէ ի ծանրագոյն ևս պայմանի գտանէին իրք եկեղեցւոյս հայ կաթողիկեայց, զի ներքին էր յայսմ նուազի յուզումն, և փնաս անհընարին գործեցաւ ի նորաբողբոջ հասարակութեան, որ այն ինչ սկսանէր բարգաւաճեալ ծաղկել։ Հազիւ քառասուն ամք անցեալ էին, և կաթողիկեայց եկեղեցին մեծաքայլ ընթանայր յառաջ, և ահա կառեալ կասեցան յընթացիցն։ Այս կարի նուազ էին, որք հակառակն կային եկեղեցական օրինաւոր իշխանութեան . այլ ի հանգամանաց ժամանակին օգտեալ, բազում յոյժ եղեն չարիք. անտուստ յառաջ եկեալք։ Յամին 1872, Անտոն Պետրոս Թ. հարկեցաւ գնալ տարադէմ ի Հռովմ ի 20 յուլիսի նոր տոմար և այլ ոմանք յեպիսկոպոսաց թողին զվիճակ իւրեանց. և շատք ևս զրկեցան յառաջնորդարանէ և յեկեղեցւոյ իւրեանց։ Զամս չորս մնաց հայրապետն ի Հռովմ. և յաջողութիւն գտեալ անտի դարձաւ ի 24 յունիսի, 1876։

Յայսոսիկ դառն աղէտս ոչ անմասն գտաւ և միաբանութիւնս Զմմառեան, հանան ի վանաց միաբանք զուրկ յամենայնէ, այլ տէր պահեաց զնոսա և քահանայապետն մեծ, Պիոս Թ. միխիթարեաց առաքելական թղթովն տուեալ ի 20 սեպտեմբեր 1871, և օգոստոս, 1872, յորս գովէ յոյժ զառաքինութիւն և զարիութիւն նոցա, որովք տարան ամենայն զբրկանաց, սիրուէ և քաջալերէ. և հայրական գթով հոգ տարաւ ամենայն պիտոյից նոցա, առ ի կեալ և յառաջ վարել զուսմունսն և զհրահանգութիւն։

Եւ յամին 1875 ի 21 մայիսի Անտոն Պետրոս Թ. մինչ ի Հռովմ էր եհան կոնդակ հաստատութեան Միաբանութեան, հաւանութեամբ սրբոյ Աթոռոյն և առաքեաց առ ամենայն միաբանս։ Յորս կան այս նշանաւոր բանք։ «Կաթողիկոսական միաբանութիւն Կիլիկիոյ ծանուցեալ արդէն անուամբ Զմմառեան միաբանութեան. գրեաթէ ընդ շրջան միոյ և կէս դարու ընձեռեալ մատոյց բազմարդիւն ծառայութիւնս եկեղեցւոյ ընդ բովանդակ սահման կաթողիկոսութեան։ . . . . . Անտոն Պետրոս Թ. կաթողիկոս հաստատէ զմիաբանութիւնս ըստ կարգաւորութեան նորին իսկ միաբանութեան, անուամբ կաթողիկոսական միաբանութիւն Կիլիկիոյ»։

Գերապատիւ Ցէրահեան Յովսէփ ծայրագոյն վարդապետ, որ ի 20 դեկտեմբեր 1868, փոխանորդ պատրիարքական ի Լիբանան՝ մեկնեցաւ անտի յամին 1873, և չոքաւ ի Հռովմ. և մնաց իբր գործակալ ի վանս գերապատիւ Աւետիս վարդապետ Թիւրքեան, որ մնաց ի նմին պաշտաման ցսկիզբն 1886 ամի, զի թէպէտև ի վերջ կոյս 1879 ամի անուանեցաւ Յովհաննէս Հաճեան Արքեպիսկոպոս Կեսարիոյ փոխան մեծաւոր միաբանութեան, այլ չև մեկնեալ անտի ննջեաց զքուն արդարոց։

Երանաշնորհ հայրապետն Անտոն թէպէտ զհոգեւորականն վարէր իշխանութիւն յետ դարձին ի Հռովմէ, այլ չէր տակաւին ծանուցեալ ի քաղաքային պետութենէ. իսկ կողմն օձտելեաց երթայր և նուազէր մանաւանդ երբ կարգեալն ի նոցանէ պատրիարք մատոյց զիւրն հպատակութիւն յամին 1877, և չոգաւ ի Հռովմ։ Յետ այնորիկ նորոգեցաւ հրովարտակ պատրիարքութեան Անտոնի Պետրոսի Թ. որ ձեռն արկ յընտրութիւն պարապեալ Աթոռոցն Սեբաստիոյ, Անկիւրիոյ, Մարաշոյ, և Տրապիզոնի, որք ձեռնա-

դրեցան ի 23 սեպտեմբեր 1877, ընդ որոց ձեռնադրեցաւ Արքեպիսկոպոս Նիկոմիդիոյ Ստեփանոս Ազարեան, որ եղև Աթոռակալ։ Նաև Արդուրնոյ ձեռնադրեցաւ 1878, եպիսկոպոս Յովհաննէս Զաքարեան։

Յամին 1880, գումարեաց Անտոն Պետրոս Թ. զեպիսկոպոսունս պատրիարքութեան յընտրութիւն եպիսկոպոսի պարապեալ Աթոռոյն Կեսարիոյ, և ի նմին ժողովի ի գումարմունսն 6/18, և 15/27 ըստ ընտրութեան միաբանից կարգեցաւ Անդրէաս, վարդապետ Աղեքսանդրեան, մեծաւոր վանաց Զմմառի, և ի հոկտեմբեր 23/4 նոյեմբեր, շրջաբերականաւ յայտ յայտ արար կաթողիկոսն ամենեցուն զկարգումն նորին յայն պաշտօն։

Ժողովս այս ի բազում գումարմունս պարապեցաւ վասն կերպի ընտրութեան յաջորդի ի պատրիարքութիւն։ Եւ ի վերջոյ հրաժեշտ տուեալ ի պատրիարքութենէ գնաց ի Հռովմ. և անդ ամբարձաւ յ 13, դեկտեմբեր, ի պատիւ հռովմայական ծիրանեաց, և շատ իսկ վաստակեալ ի կանգնումն հայկական վարժարանին ի Հռովմ, ննջեաց ի տէր։



ՍՏԵՓԱՆՈՍ Ե. ՊԵՏՐՈՍ Ժ.

ԱԶԱՐԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԵՑԻ

(1886 – 1899)

Վաղ իսկ ծանօթ էր սա ամենեցուն և յամաց հետէ վարէր զպաշտօն Աթոռակալութեան յայն դժուարակնճիռն դէպս։ Յետ հրաժարելոյ Անտոնի Պետրոսի Թ. տարժանագոյն ևս եղև երկարաձգեալ պարապութիւն Աթոռոյ իբր ութամսեայ ժամանակ, յորս քաջ եցոյց նա զառաջնորդական միտսն և զհանճար ի վարչութիւն մեծամեծաց և ծանր գործոց, որով յաջողեցաւ հարթել զիսոչսն. որք արգելք լինէին գալոյ յընտրութիւն նորոյ հայրապետի յայնչափ ժամանակս։

Յետ մասնական գումարմանց ի պատրաստութիւն կարևորացն ի 6 յուլիսի, 1881. գումարեցան յԱթոռանիստ եկեղեցւոջ սուրբ Աստուածածնի ի Բերա Կոստանդնուպօլսի, Ստեփանոս Ազարեան որ զգահերիցութիւն սիւնհոդոսին ունէր, հրաժարմամբ արքեպիսկոպոսին Մամպռոյ, որ երիցագոյն ի մէջ առաջիկայից էր, Մելքոն Հազարեան, Սուքիաս Փազանճեան և Յովհան Փիւբելեան Արքեպիսկոպոսք. Պետրոս Թիլքեան, Ստեփանոս Մելքիսեդեկեան, Կարապետ Առաքելեան, Կարապետ Ղատիֆեան, Կղեմէս Միքայէլեան և Պօղոս Մարմարեան եպիսկոպոսք։ Բացակայ էին Արքեպիսկոպոսքն Գրիգոր Պալիթեան, Ղևոնդ Խոռխոռունի և Բաբգեղ Գասպարեան որք

առաքեալ էին զիւրեանց քուէ։ Եւ և Թէոդորոս Եպիսկոպոս Ներշապուհ և Մովսէս Եպիսկոպոս Ամպէրպոյեան, որք և մատուցեալ էին զքուէս իւրեանց։ Եւ առաւելութեամբ քուէից (երկու երրորդաւ որպէս միշտն ի կիր ածի յընտրութիւնս պատրիարքաց) ընտրեցաւ Ստեփանոս Ազարեան Արքեպիսկոպոս Նիկոսիոյ, որ անուանեցաւ Պետրոս Ժ.։ Եւ յ8 յուլիսի, կատարեցաւ հանդէս գահակալութեան մեծաւ շքեղութեամբ ի մայր եկեղեցւոջ Նուիրելոյ Յիսուսի Փրկչի, որ ի Կալաթա. յանդիման բազմութեան ժողովրդեան և եկեղոցն ի տեսութիւն հանդիսի։

Ի 14 նորին ամսոյ շնորհեցաւ նմա ընդունելութիւն առ վեհափառ ինքնակալին եպիսկոպոսաց և աշխարհական իշխանաց, որ եղև շքեղ յոյժ, և տուաւ իսկ նորընտիր պատրիարքին շքանշան առաջին Մէճիտեան կարգի և ժապաւէնն մեծ, և այլ եպիսկոպոսունք որոց ոչն էր ընկալան շքանշանս։

Հաստատութիւնն տուաւ ի ձեռն փոխանորդի ի 4 օգոստոս, այլ վերարկուն առաքեցաւ ի Կոստանդնուպոլիս և Առաքելական նուիրակն արկ ի վերայ նորա ի 14 օգոստոս յեկեղեցւոջ Հոգւոյն Սրբոյ։

Յետ այնորիկ առանձին կոնդակաւ և այլոք հրահանգաք և ընծայութեան թղթովք առաքեաց ի վանս փոխման կուսին ի Զմմառ զԱնդրէաս գերապայծառ Աղեքսանդրեան զկարգեալն ի նախորդէն իւրմէ մեծաւոր ի վերայ նոյն վանաց, որ մեկնեալ ի Կոստանդնուպոլսէ եհաս ի Զմմառ յ 2. սեպտեմբեր. 1881։

Ապա ձեռնադրեաց եպիսկոպոս զգերապատիւ Պօղոս վարդապետ Լիմանուէլեան ի վերայ Կեսարիոյ, որ ընտրեալն էր ի վերջին ամի նախորդին իւրոյ։

Իսկ Սուքիաս վարդապետ Գազանճեան, որ յանուն Անտիոքայ ձեռնադրեալն էր, ընկալաւ զյոր-

ջորջանաց անուն Սէլիմպրիոյ Արքեպիսկոպոսի և Յովհան վարդապետ Փիւբէլեան ձեռնադրեալ ամօք յառաջ եպիսկոպոս՝ զԱտալիայ։ Յամին 1884 ի 16 սեպտեմբեր, Յարութիւն վարդապետ Ճամճեան ձեռնադրեցաւ եպիսկոպոս Մշոյ, յորմէ ապա յետ երկուց ամաց փոխադրեցաւ ի Պրուսա, և 19 հոկտեմբեր, Յովսէփ վարդապետ Ցէրահեան ի վերայ Տիգրանակերտի։ Կարապետ վարդապետ Ալանեան եղև եպիսկոպոս Ատանոյ յամին 1885, և զհինգ ամ կացեալ անդ կարգեցաւ ապա ի սիւնհոդոսի Աթոռակալ Հայրապետին։ Ձեռնադրեցաւ յ 2. մայիս 1885, Բառնաբաս վարդապետ Ագշէհիրլեան եպիսկոպոս Աղեքսանդրիոյ Եգիպտոսի։ Եւ յ 19 մայիսի, 1887 ձեռնադրեցաւ Յովհաննէս վարդապետ Յովհաննէսեան՝ եպիսկոպոս Մշոյ, յորմէ յետ երկուց ամաց փոխադրեցաւ յԱնկիւրիա. ձեռնադրեցաւ ապա յամին 1890, ի 23 սեպտեմբեր Աւետիս վարդապետ Թուրքեան ի վերայ Մարաշոյ. սա յետինն ամաց եղև Արքեպիսկոպոս Բերիոյ։ Կարապետ վարդապետ Փըշուրեան Կարնոյ, և Աւետիս վարդապետ Արփիարեան՝ Խարբերդի, որ ի 24 փետրուար, 1898 կարգեցաւ Աթոռակալ առ կաթողիկոսին յորջորջմամբ Արքեպիսկոպոսի Անարզաբայ։ Յ 8 ապրիլ 1892, ձեռնադրեցան Սահակ վարդապետ Հաճեան Արքեպիսկոպոս Սեբաստիոյ և եպիսկոպոս Եւդոկիոյ և Պօղոս վարդապետ Թերզեան եպիսկոպոս Ատանոյ և ի նմին ամի յ 31 մայիսի, Ներսէս վարդապետ Ճընտոյեան եպիսկոպոս Մշոյ. Ա.ռ սովին կաթողիկոսաւ ընտրեցան ևս և Միքայէլ վարդապետ Խաչատուրեան Անդրէաս վարդապետ Ջելեպեան և Ստեփանոս վարդապետ Իսրայելեան և հաստատեցան իսկ, այլ կանխեալ օրհաս մահուն ոչ ժամանեաց տալ նոցա զօծումն եպիսկոպոսական ձեռնադրութեան։ Զոր կա-

տարեաց յետուստ փոխանորդ նորին Արքեպիսկոպոսն Անարզաբայ. ըստ մասնաւոր հրամանի և արտօնութեան։ Նշանաւոր ի գործս հայրապետիս է պատգամաւորութիւն նորա ի դիմաց վեհափառ սուլթանին ի Հռովմ ի հանդէս Յոբելինի մեծի քահանայապետին Լևոնի ԺԳ։

Սինհոդոսն զոր գումարեաց յամին 1890, ի Փաղկեդոն, յորում անձամբ առաջի գտան ընդ գահերիցութեամբ Ազարեան պատրիարքին՝ արքեպիսկոպոսունք և եպիսկոպոսունք՝ Ղևոնդ Խոռխոռունի Մելիտինեայ, Յովհան Քիւրեղեան Ատալիոյ, Ստեփան Մելքիսեդեկեան Կարնոյ (հրաժարեալ) Կարապետ Ղատիֆեան Սեբաստիոյ, Պօղոս Մարմարեան Տրապիզոնի. Պօղոս Լիմանուէլեան Կեսարիոյ. Յովսէփ Ֆերահեան Տիգրանակերտի, Յարութիւն Ճամճեան Պրուսայ, Կարապետ Ալանեան Ատանոյ. Բառնաբաս Աղշէհիրլեան Աղեքսանդրիոյ. Յովհաննէս Յովհաննէսեան Մշոյ։ Գլուխ քարտուղարաց էր մեծաւորն Զմմառի Անդրէաս գերապայծառ Աղեքսանդրեան, ընդ որում էին և գերապատիւ վարդապետք, Ստեփան Աբիկեան, Ներսէս Ամեմեան, Գէորգ Թէրզիպաշեան։ Սկիզբն ժողովոյն եղև ի 27 յունիսի և աւարտն ի 4 սեպտեմբեր, ի կէս գումարմունն, ի ժողովի սատ բանք եղեն և վասն Զմմառեան Միաբանութեան ի նիստան Լ. ԼԱ. ԼԲ. ԼԳ։ և սահմանեցան իսկ կանոնք հաւանութեամբ համօրէն հարցն, որք և առաքեցան ընդ այլ գործոց ժողովոյն ի Հռովմ։

Յաջողեցաւ ևս երանաշնորհ հայրապետն բառնալ ի միջոյ զկրճիմն բաժանման, որ մնացեալ էր տակաւին ի հասարակութեանս, և հաստատեցաւ խաղաղութիւն յամենայն ուրեք։

Կառոյց զկուսաստանն, որ ի հրայրեացն 1870,

ամին հիմն ի վեր տապալեալ էր, շքեղ ևս քան զառաջինն, նոյնպէս և զեկեղեցի սուրբ Պօղոսի ի Պէօյուքտէրէ, և զպանդոկն Պրիսթօլ, երեքին իսկ շինուածք մեծակառոյցք և մեծածախք։

Քաջալերեալ յօրինակէ և ի խրախուսանաց հայրապետին արար և մեծաւորն վանաց Զմմառի նորոգութիւն ո՛չ սակաւ ի վանս, և նորանոր շինութեամբ աճեցոյց զկալուածն և պտղաբերս արար, որք անհրաժեշտ էին, յետ անկման յարգի բժոժի շերամոյ. և արար բազում բարեկարգութիւնս. ըստ աստուածապաշտութեան, ըստ ուսման և ըստ այլ ամենայն պիտոյից։

Են արդարև բազում գործք և արարք Ստեփանոսի Պետրոսի թող ժ. զհամբաւ նորա առաջի մեծի պետութեան օսմանեան, սրբոյ աթոռոյն և համայն քաղաքակիրթ աշխարհի։ Ունէր գրիչ արագագիր գպրի, խօսէր ընթեռնոյր և գրէր յութ բարբառս արևելեան և արևմտեան, հմտացեալ յոյժ քան զրազումս յաստուածային, յեկեղեցական և յարտաքին գիտութիւնս. ունի մատեանս ինչ տպագրեալս և ձեռագիր յայլ և այլ լեզուս. նաև ճառս ընտիրս. իսկ գրութիւնք նորա երկարապատումք, ըստ նիւթոցն տանելոյ, լի հմտութեամբ էին. դիւրութիւն մեծ էր նորա ի խօսել և համոզիչք յոյժ էին յորդորքն. և յաշխատանս անխոնջ գտաւ միշտ։

Կալաւ զաթոռն հայրապետական զամս ԺԷ. ամիսս 9 և աւուրս 13 յընտրութենէ իւրմէ, և ննջեաց ի տէր յ 19 ապրիլ. 1899։ Եղև թաղումն մեծահռչակ, և եղաւ մարմին նորա ի դիր հանգստեան ի հասարակաց գերեզմանի ի մասն անուանեալ՝ թաղ եկեղեցականաց,

ՊՕՂՈՍ Գ. ՊԵՏՐՈՍ ԺԱ.

ԷՄՄԱՆՈՒԷԼԵԱՆ ԹԷԼ-ԷՐՄԵՆՑԻ

1899 — 1904

Ըստ որոշողութեան որ եղեալն էր յաւուրս կաթողիկոսութեան Ստեփանոսի Պետրոսի Ժ. կալաւ անդէն և անդ աթոռական Աւետիս արքեպիսկոպոս Անարզաբայ զվարչութիւնն պատրիարքութեան և թեմին Կոստանդնուպօլսի, և պատրաստեալ և յարդարեալ զամենայն, հրաւէր կարդաց առ ամենայն արքեպիսկոպոսս և եպիսկոպոսս գալ ի ժողով ընտրութեան նոր պատրիարքի։ Եկին ժողովեցան հետզհետէ եպիսկոպոսունք յայլ և այլ թեմից և գաւառաց։ Եւ ի 24 յուլիսի. 1899, գումարեցան ի ժողով յաթոռանիստ եկեղեցւոջ սուրբ Աստուածածնի, ընդ գահերիցութեամբ արքեպիսկոպոսին Անարզաբայ, Յովհան Աստալիոյ, Աւետիս Բերիոյ, Սահակ Սեբաստիոյ և Եւդոկիոյ արքեպիսկոպոսք և Պօղոս Տրապիզոնի, Պօղոս Կեսարիոյ, Յարութիւն Պրուսայ, Պօղոս Ատանայ, Կարապետ Կարնոյ, Ներսէս Մշոյ, Միքայէլ Մելիտինեայ, Անդրէաս Տիգրանակերտի և Ստեփան Խարբերդի եպիսկոպոսք. և յետ հայցելոյ զլոյս հոգւոյն սրբոյ, ընտրեցին ի պատրիարք Տանն Կիլիկիոյ՝ զՊօղոս վարդապետ Էմմանուէլեան Եպիսկոպոս Կեսարիոյ, որ կոչեցաւ Պետրոս ԺԱ.։ Յետ երից ամսոց և չորից աւուրց պարապութեան աթոռոյն։

Ի 6 օգոստոս, կատարեցաւ ի նոյն աթոռանիստ

եկեղեցւոջ հանդէս գահակալութեան շքեղ յոյժ. յորում առաջիկայ գտան ազգք և ազինք, որք բնակեալ են ի Կոստանդնուպոլիս, այլ և բոլոր դեսպանք ունէին իւրեանց ներկայացուցիչս։ Ապա շնորհեցաւ նմա մուտ առ վեհափառ ինքնակալն, որ ընկալեալ սիրով՝ ետ նմա զշքանշան Մէճիտեան առաջին կարգի ընդ մեծի ժապաւէնին։ Յետոյ ուրեմն և զօսմանիէն նմին կարգի. և ի պարսից Շահէն տուաւ նմա Շիր խուրշիտ առաջինն

Յետ հաստատութեան ի Լևոնէ ԺԳ քահանայապետէ, ընկալաւ և զվերարկուն ձեռամբ Աղաքելական Նուիրակին Կոստանդնուպոլսի յեկեղեցւոջ Հոգւոյն Սրբոյ ի Բանկալթի, յ18 փետրուար 1900։

Յամին 1901, յամսեան սեպտեմբեր, զաւուրս վեշտասան (5, 30) աշխատ եղեալ անդադար յետ բազում անգամ խորհրդածելոյ և քննելոյ պատրաստեցաւ ծրագիր կարգաց և կանոնաց միաբանութեան վանաց փոխման կուսին ի Զմմառ, որ և առաքեցաւ ի Հռովմ ի 20 սեպտեմբեր, յարակից թղթով։

Ի սմին ամի ի 10 նոյեմբեր, ձեռնադրեաց հայրապետն զՄատթէոս վարդապետ Սիսլեան եպիսկոպոս Կեսարիոյ. զՊօղոս վարդապետ Սապպաղեան եպիսկոպոս Աղեքսանդրիոյ Եգիպտացւոց, և զԿղեմէս վարդապետ Ղազարոսեան Անկիւրիոյ. իսկ ի 4 դեկտեմբեր զՅովհաննէս վարդապետ Մուրատեան եպիսկոպոս Մարաշոյ։

Ապա ի 6 յուլիսի, 1902. ձեռնադրեաց Աբքեպիսկոպոս Մարտինոյ և Բերիոյ զՅուսիկ վարդապետ Կիւլեան, և զՕգոստինոս վարդապետ Սայեղեան։ Եւ ի հուսկն ի 14 յունիսի. 1903, զՍտեփանոս վարդապետ Աբիկեան եպիսկոպոս Տրապիզոնի։ Փոյթ մեծ ունէր յառաջադիմութեան գործոց պատրիարքութեան իւրոյ, որպէս և միաբանութեան Զմմառի.

և այլոց եկեղեցական հաստատութեանց, ջան եղ շինուցանել ըզպարսան, որք ծանրանային ի վերայ Ամթոռոյն, և եթէ սղութիւն ժամանակին զլրումն բաղձանացն տեսանել չներեաց. այլ և ոչ յաւել ինչ ի վերայ, ինայութեան միտ եղեալ։

Գիտակ էր հայրապետս փոյթեռանդ այլ և այլ արևելեան և արևմտեան լեզուաց, հմուտ էր իմաստասիրական և աստուածաբանական և այլ ևս գիտութեանց, յօրինեաց փիլիսոփայութիւն հայերէն յերկուս հատորս, աստուածաբանութիւն համառօտ ի Տաճիկ բարբառ, նոյնպէս ի նոյն լեզու մատենիկ մի զծիսից և զսովորութեանց (Այն ու Ատէթ) և զայլ յօրինուածս ձեռագիր կամ տպագրեալ, քաջահմուտ էր օրինաց Օսմանեան պետութեան կրօնականաց և քաղաքայնոց։ Վարեալ զԱթոռն զամս Դ. զամիս 8 և զաւուրս 14 հանգեաւ ի տէր յ18, ապրիլ. 1904։

Մեծաւ յուղարկաւորութեամբ եղաւ մարմին նորա ի դիր հանգստեան ի հասարակաց գերեզմանի ի թաղն կեղեցականաց ըստ կամաց իւրոց. որպէս ի կենդանութեան իւրում յայտ արարեալ էր։

Եւ ճնաց Ամթոռն թափուր զամիսս 3 և զաւուրս 16, և էառ դարձեալ ի ձեռս զվարչութիւնն տեղապահութեամբ Աւետիս Արփիարեան Արքեպիսկոպոս Անարզաբայ, որպէս որոշեալն էր յաւուրց անտի Ստեփանոսի Պետրոսի ժ. որ և ազգ արարեալ ամենեցուն զփոխիլ հայրապետին յաստեացս, հրաւիրեաց զԱրհիապատիւ արքեպիսկոպոսունս և զեպիսկոպոսունս ի ժողով ընտրութեան։

ՊՕՂՈՍ Դ. ՊԵՏՐՈՍ ԺԲ.

ՍԱՊՊԱՂԵԱՆ ԲԵՐԻԱՑԻ

1904 –

Հուսկ ընդ հուսկ հասանէին ի Մայրաքաղաքն արքեպիսկոպոսք Սեբաստիոյ–Եւզոկիոյ, Զմմրնոյ (յորջորջեալ), Մարմնի և Բերիոյ. և եպիսկոպոսք Պրուսայ, Կարնոյ, Մշոյ, Տիգրանակերտի, Մելիտենեայ, Խարբերդի, Կեսարիոյ, Զեյթունդրեայ. Անկիւրեայ, Մարաշոյ և Տրապիզոնի։ Մինչդեռ սոքա ամենեքին ընդ գահերիցութեամբ արքեպիսկոպոսին Անարգարայ, տեղապահի աթոռոյն գումարէին առաջ առաջ ի պատրաստութիւն կարեւորացն. անդուստ և դարձ կղերականաց և Ազգանին, բան սովորութեանն, որ իբր ի քառորդ դարէ ի գործածութեան էր. և չէր իսկ օտար ի հնագոյն սովորութենէ. սակայն զիւրեանց բարեաց վկայութիւն զհնգեցանց յարհիւպատիս հարց անտի, և որ անծանօթն իսկ էր երեսաց ի Մայրաքաղաքին, և բազմազանեցն ի մեծարգոյ ըուէարկուաց անտի, համբաւոն յինքն ձգէր զմեծագոյնն քան զամենեսեան մասն։ Ոչ արասաքին փայլք էին. որք զաչս նոցա շլացուցեալ խաղէին. այլ զի երեէր ի նոսա հոգի բարեգութ, եօթնարիւն շնորհօք հոգւոյն սրբոյ զարդարեալ տեսանէին զնա, հայր ազգաւոյ և հոգիս փութաջան նուիրեալ յերջանկութիւն հօտին։ Եպիսկոպոսունք չկրեցին զժուարութիւն զալ ի միաբանութիւն, այլ

նա չառնոյր յանձն ընդունել, զոր ընծայէին նմա. զի ըզծանրութիւն պաշտաման յայտ յանդիման տեսանէր։

Ի 4 օգոստոս (Ն. տ.) յաւուր եշ. գումարեցաւ նիստն յԱթոռանիստ եկեղեցւոջ սուրբ Աստուածածնի, որ ի Բերա, և ընտրեցաւ պատրիարք Կիլիկիոյ Պօղոս եպիսկոպոս Ադեքսանդրիոյ Եգիպտոսի. և կոչեցաւ Պետրոս ԺԲ։ Ընդդէմ դարձաւ նա և յետ այնորիկ բազմօք, այլ ի յորդորանաց եղբայրակցացն առ հաստատակ ստիպեալ զիջաւ կամաց նոցա։

Ի 29. օգոստոս 11 սեպտեմբեր յաւուր կիրակէի կատարեցաւ մեծահանդէս շքով, ի ներկայութեան արքունի պաշտօնակալի. դեսպանական ներկայացուցչաց, աւագանւոյ հայ հասարակութեան և այլ ևս ազգաց և մեծի բազմութեան ժողովրդեան, յորում խօսեցաւ հայրապետն ճառ լի իմաստութեամբ յօրինեալ, և ողջունեալ յամենայնի յարգանօք դարձաւ ի հայրապետանոցն։

Այսպէս շնորհեցաւ նմա մուտ առ վեհափառ ինքնակալն Օսմանեան, և պատուեալ ի պալատականացն ի դարձին արար ազօթս վասն երկարութեան կենաց նորին կայսերական վեհափառութեան։

Հաստատութիւն քահանայապետական տուաւ ի Պիսէ ժ. ի գաղանի խորհրդարանի ի ԺԴ ամսեանն նոյեմբեր 1904. նոյնպէս և շնորհեցաւ վերարկուն ի ձեռն Յարութիւն արքեպիսկոպոսի Ամասիոյ կարգելոյ ի նորընտիր պատրիարքէն յայն ամսոյ։ Նշանաւոր են բանք գովեստից արբազան քահանայապետին, որ է, «Յօժարամիտ և առատակամ յարուցն պատուական եղբօր Պօղոսի Սպասպեան առ այս Աթոռ Առաքելական և ազգի ազգի լաւութեանցն հանդէս՝ լիապատում վկայութեամբ եղբայրակցաց իւրոց եպիսկոպոսաց զրուատեալ են։ Վարեալ իսկ

է նորա զպաշտօն եպիսկոպոսութեան և բարեպաշտութեամբ, խոհական իմաստութեամբ, արդ արութեամբ և համեստագոյն վարուք. ևս և առ ատաձեռն բարութեամբն, և զգործս ծանր ծանր պաշտամանց բերեալ հանեալ ի վճար յաջողապէս, արժանի եղև սիրոյ և յարգանաց ազգին իւրոյ»։

Զանցելոց էին բանք քահանայապետին իբրև զեղելոց, այլ և արդիւնք իրաց քաջ հանդիսացուցին զայնս և ի պատրիարքութեան։ Այն ինչ կոխեալ ըզսեամս հայրապետանոցին առատ տրովք սփոփեալ մխիթարեաց զկարօտեալսն. օժանդակ եղև բարեպարիշտ հաստատութեանց Մայրաքաղաքին։ Եւ տպագրել իւրով իսկ ծախիւք զկանոնս միաբանութեան Զմմառի զյօրինեալն և զկարգաւորեալ յերկուց երանայիշատակ նախորդաց իւրոց. յաւելեալ ի նոյն ելրիս կանոնս կարևոր յոյժ, և զամենայն վաւերացոյց գրութեամբ ձեռին իւրոյ՝ առ ի գործածութիւն.

Նոյնպէս եւ տպագրել զվեռուն օրինէքն, առ ի դիւրութիւն։

Կառուցան Ջանիւք նորին տաճն տունք ի կալուածս Սուրբ Յակոբայ յեկամուտ անկելանոցին, հիմն արկաւ անդէն և մեծի օթևանին։

Կարգեաց և ի խնամս աղքատաց մասնաւոր ժողովս առանձինն կանոնօք յամենայն ժողովրդապետութիւնս Կոստանդնուպօլսի։

Այս ամենայն և այլ ևս իրք կատարեալք ի սուղ ժամանակի, յորդոր լինին ամենեցուն, աղօթս և պաղատանս մատուցանել առ Տէր, զի տացէ փոյթեռանդն հայրապետիս երկայն և երջանիկ կեանս և հաւասար ըղձիցն յաջողութիւն, առ ի մեծամեծս ևս քան զսոյն գործս հանել ի գլուխ յօգուտ և ի բարգաւաճանս հայ կաթողիկէ եկեղեցւոյ և հասարակութեան։

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

[illegible] [illegible] [illegible] [illegible] 11
[illegible] [illegible] " [illegible] 20
[illegible] " [illegible] 25
[illegible] " [illegible] 31
[illegible] [illegible] " [illegible] 34
" [illegible] " [illegible] 38
[illegible] [illegible] " [illegible] 44
[illegible] [illegible] " [illegible] 46
[illegible] " [illegible] 52
[illegible] [illegible] " [illegible] 60
[illegible] [illegible] " [illegible] 65
" [illegible] " [illegible] 68.

Գրատ
Արտակ Ալպոյաճեանի
Գանձակ — Սաթարխ

[704]

W[illegible]
132